

ՔԱՆԱԴԵՐ

Հոգեւոր Ասպարեթ Արեւոյն հասարակութեան
PANPÈRE REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France

7, Rue Papère, MARSEILLE

(Ժ. Տարի) Հոկտեմբեր 1934

(10^{me} Année) Octobre 1934

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Մխիթարեան թիւնը

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Մրցման համար մերկանալ

Բայց

Թարգ. Չ. Բ. Պուտաքեան

Կենաց ածուներէն

Անոր սէրը

Ս. Գրական ուսումնասիրութիւն

Խաչին գայթակղութիւնը

Թ. Օ. Սփարքո

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչումներ

Վ. Ս.

Ծպտեալ կռապաշտներ

Սամուէլ Պ.

Կենսագրական

Ճան Աւետի

Վ. Ս.

Մանկանց սիւնակ

Կողմնացոյցը

Ջանազան լուրեր

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ փրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհատներու համար, այլ ամբողջ, բնօրէն ճշմարիտ «Բան»ին ներկայացուցիչն ալ չճանչնար ու եւ յարանուանութիւն մը, հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ կը տպուին Մարսէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է, **Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ** Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխանատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որոն ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ասորելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ ղրամական առաքումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆԻ անունով, երկուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայէ դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Le Gérar: M. le PASTEUR KALTENBACH

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, ես
կանգնեմ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չունանայ:

Ուրեմն ա՛յ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

Ժ. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1954

ԹԻԻ 10

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻՍԻՈՆԱՐՈՒԹԻՒՆԸ

(Ուղատ խորհրդածութիւններ)

Ինչպէ՞ս պիտի լսեն առանց մէկուն քարոզչի լուսն:
Հուով. Ա. 14

Վա՛յ է ինծի եթէ Աւետարանը չքարոզեմ:
Ա. Կոր. Թ. 16:

Վերջացնելով մեր խորհրդածութիւնները ներ-
կայ վերնագրին տակ, հարկ կը սեպենք շօշա-
փել վերջին հարց մը եւս, որ կը բղխի մեր անց-
եալի յօդուածէն (Տես թիւ 7):

Հոն քննած էինք սա հարցը թէ հարկ կա՞ր որ
միսիոնարութիւնը մեր մէջ գործէր եւ դեռ գոր-
ծելու հարկաւորութիւն կ'այ: Ներկայ հարցը սա-
կայն աւելի սեղմ շրջանակի մը կը վերաբերի.
Տեղական եկեղեցի մը իրաւունք ունի՞ իրմէ դուրս
ուրիշ շրջանակներու մէջ ալ աւետարանչական
գործ ընելու:

Ինչպէս ամէն ազգերու մէջ, նոյնպէս նաև մեր
ազգին մէջ աւետարանչական գործը յաճախ մար-
դոսութիւն եւ գողութիւն յօրջորջուած է: Խօս-
ուած են ճառեր այս մարդոսութեան դէմ բե-
մերէ, եկեղեցիներու խորաններէ, եւ գրուած են
խմբագրականներ եւ յօդուածներ այս նիւթին
շուրջ, պարսաւելով, խծրծելով, ստորնագոյն շար-
ժառիթներ վերագրելով աւետարանիչներուն, ըս-
պառնալով անոնց, նոյնիսկ սպաննելով զանոնք
կամ անոնց հետեւորդները:

Սակայն եւ այնպէս հարկ է խնդիրը լախմը-
տօրէն եւ անկողմնակալ կերպով քննել Ս. Հո-
գեոյն լուսովը: Պէտք է լուսաւորուինք, եթէ այդ
լոյսը նոյնիսկ գմեղ յանդիմանէ ալ մեր կիրքե-
րուն համար:

Արդ, գողութիւն է յարանուանութենէ մը
մարդ քաշել ուրիշ յարանուանութեան, կամ հա-
մայնքէ մը ուրիշի: Ե՛րբ կ'ըլլայ գողութիւն,
ե՛րբ չէ՝ գողութիւն:

Գողութիւն է, երբ աւետարանիչ մը կը հրա-
ւիրուի հոգեւոր համայնքի մը մէջ գործելու, նա
կը քարոզէ յաջողութեամբ եւ կը սիրուի որ-
պէս եղբայր, բայց երբ նա իր միջոցաւ նոյն
տեղին մէջ ապաշխարած՝ կամ կանխաւ հոն գտ-
նուող եւ զինքը սիրող հոգիները իր անձին
կապելով ուզէ նոյն համայնքին մէջ կորիզ մը
շինել իրեն համար, ապագայ գործունէութեան
մը դուռ բանալու, դատապարտելի է: Այնպիսին
երբեք թող չխորհի թէ ինքը վերէն յաջողու-
թիւն պիտի գտնէ: Ինքը հրաւիրուած էր հա-
մայնքէ մը ուր հոգեւոր կեանք կայ եւ հոգեւոր
հովիւ, իր միջոցով ապաշխարածները դիւրաւ կը-
նար սոյն համայնքին ձգել անուցանելու հա-
մար: Արդէն նորահաւատներ Պօղոսեան, Ապօղոս-
եան ըսելու միշտ հակամէտ են: Այսու ամենայ-
նիւ հոգեւոր գործաւորներ երբեք ինքզինքնուն
թող տալու չեն համայնքներու մէջ հովիւի կապ-
ուելու մարմնաւորութիւնը քաջալերելու (Ա. Կոր.
Գ.): Հոգեւոր գործաւոր մը իր հոգեւոր գործակցին
վստահելու է, եթէ ան քիչ մըն ալ տարբեր ըլ-
լայ երկրորդական մեթոտներու եւ խորհեւա-
կերպերու մէջ: Բայց այդ նոյն աւետարանիչը
երբ հանդիպի հոգիներու, որոնք կուգան արդի-
ական համայնքներէ, ուր Քրիստոսը իր լեցունու-
թիւնով չքարոզուիր, հապա միայն բարոյակա-
նութեան տիպար մը կը ներկայացուի, ուր անձ-
նական արդարութիւնով փրկութեան վարդապե-
տութիւնը կը շեշտուի, եւ որու մէջ հոգեւորներ
հակառակ իրենց ջանքերուն չեն կրցած օգտա-
կար ըլլալ, ընդդիմութեան գօրաւոր ըլլալովը,
ուր ամէն պաշտաման մէջ իրենց ներքին զգա-
ցունները կը վիրաւորուին, ուր վտանգ կայ նաև
իրենց հոգեւոր կեանքին, նոյն այդ աւետարա-

նիչը գողութիւն ըրած չըլլար երբ նա կը թելադարէ Կրեկոս շունչը հեղձուցիչ մթնոլորտէն ազատել ուզող հոգիներուն, դուրս գալ և շունչ առնել ուրիշ եղբայրներու քով, միանալով բնոնց և սրնանելով անոնց հետ ու մնուցանելով նորահաս սերունդ մը: Գողութիւն ըրած չըլլար ըսի, ընդհակառակն այդ պարագային ապահոված կ'ըլլայ հոգեւորներու կեանքը, քանզի արդիականութեան ստոնամանիքին մէջ կեանք մը չկրնար ածել ու մեծնալ:

Այսպիսի անձերու ձեռնառն ըլլալու գործունէութիւնը Աստուծոյ առջեւ պարտականութիւն մըն է: Գառնուկ մը անապատին և լեռներու մէջ անապահով չկրնար ձգուիլ, գայլերէն կը յօշոտուի այն: Մեր Տէր Յիսուս Իր աշակերտները կանչեց առաքեալներ ըլլալու եւ մարդորսներ, ու երբ զանոնք զրկեց, ըսաւ որ անոնք նախ Երուսաղէմէն սկսէին, ապա Հրէաստանի եւ Սամարիայի մէջ եւ շարունակէին մինչեւ աշխարհիս ծայրերը: Երուսաղէմի մէջ Հրեաներ կային եւ մենք արդէն կը տեսնենք որ առաքեալները նախ անոնց մէջ գործեցին եւ որոնք որ ապաշխարեցին, եկեղեցիին վրայ աւելցան եւ իրենց նախկին ուղղութիւնը ձգեցին՝ կռնակ դարձնելով օրէնքին: (Ինչ որ ինծի շահ էր Քրիստոսի համար փաստ սեպեցի... «Քրիստոսի հետ խաչը ելալ...»):

Ինչո՞ւ համար Տէրը բաժանում բերաւ. վասն զի օրէնքը, տաճարը, կրօնական ծիսակատարութիւնները չէին կրնար Իսրայէլը փրկել, ասոր համար Փրկիչը եկած էր ազատելու զանոնք մեղքէն ու մահուանէ և ուստի հարկ էր այդ Փրկչին հաւատալ, եթէ ոչ յաւիտեանս պիտի կորսուէին: Այսօր նոյնն է իրողութիւնը: Ան որ ծէսին, մարմինին, նիւթին, վարդապետութեան փակած է, Աւետարանը կուգալ զանիկա փրցնելու ատոնցմէ եւ յարաբերութեան դնելու կենդանի Քրիստոսի հետ: Ու երբ անձ մը կենդանի Քրիստոսի հետ այդ կենսունակ յարաբերութեան մէջ կը մտնէ, մեռած յարանուանական, անուանական եկեղեցիին պատկանելի կը դադրի, թող տալով մեռելները որ թաղեն իրենց մեռելները:

Արդ, ձախ մտքով հասկցուած մարդորսութիւն չէ երբեք երբ հոգի մը Աւետարանի լոյսին առջեւ կը բերուի անձնաքննութեան եւ մեղքի գիտակցութեան եւ անկէ ազատուելու որոշման կ'առաջնորդուի: Անջատողական գործ չէ բնաւ երբ իր ճամբան կորսնցուցած եւ միայն եկեղեցի անունը կրող եւ աստուածապաշտութեան զօրութիւնը չունեցող համայնքէ մը հոգի մը Քր-

իստոսի կը տարուի: Ընդհակառակն այդ հաստատութիւնն էր որ Քրիստոսի վերաբերող գառնուկը անկէ ետ կը պահէր: Բնականաբար նոր կեանք սկսող մէկը ինք ազատութիւն ունի ընտրելու իր ապագայ հօտը, որուն պիտի վերաբերի. այս ազատութեան ե ոչ մէկ մարդ կրնայ դաշիլ:

Ներկայիս բոլոր յարանուանութիւններ գիտակից ըլլալու են այն իրողութեան թէ, անոնք որ բողոքական, կամ լուսաւորչական եւ կաթոլիկ են ծնունդով բայց ոչ գործնականին մէջ, հապառձացած եւ անտարբերներ են, անոնք իրաւունք չունին կոչուելու իբր այն: Կան շատ մեծ թիւով ազատախոհ, անտարբեր, անհաւատ, նիւթապաշտ բողոքականներ, լուսաւորչականներ որոնք սիրով պիտի ուզէին տեսնել եկեղեցիները քանդուած և քրիստոնէական հաւատքը վերջացած մեր մէջ: Այսպիսիները կրկին բողոքական, կամ լուսաւորչական կամ եկեղեցւոյ զուակ կոչել յիշատի այսպանելի եւ անպատուաբեր է Քրիստոսի եկեղեցիին: Ասով ըսել ուղեցինք թէ եկեղեցիք ուղք ունենալու է տեսնելու իրականութիւնը եւ գործելու է անոր համաձայն: Աւետարանական եկեղեցին ուրիմն անիրաւութիւն ըրած չըլլար, երբ յարաբերութեան կը մտնէ այսպիսիներու հետ, որոնք արդէն իրենց մայր եկեղեցին ոտք չեն կոխեր այլեւայլ պատճառներով եւ փոխադարձաբար:

Հայ Աւետ. եկեղեցին Քրիստոսի վերջին պատուէրին հետեւելով նաեւ պարտական կ'զգայ ինքզինքը այն բոլոր հայերուն հանդէպ, որոնք անապաշխար են, հոգ չէ թէ անոնք ինչ յարանուանութեան եւ ինչ կուսակցութեան կը վերաբերին: Քրիստոսի պատուէրն է, «զացէք աշակերտեցէք»: Երբ մանուկ մը ծովն ինկած խեղդամահ վիճակի մէջ կը գտնուի, երբեք չենք ըսեր թէ քանի որ մեր զաւակը չէ, մեր ծանօթը չէ, հոգ չենք ըներ անոր համար: Ընդհակառակն, կը նետուինք ջուրը զայն ստոյգ մահէն ազատելու: Հոգիին արժէքը շատ մեծ է Աստուծոյ քով նաեւ Աստուծոյ զաւակներուն քով. անոնք գիշեր ու ցորեկ հանգիստ չեն կրնար ընել մինչեւ որ Տէրը յաղթանակ չտանի խեղճ մեղաւորին վրայ:

Եզրակացութիւն.— Մեր խորհրդածութեանց որպէս առանցք ընտրուած համարները որոշ պատգամներ են մեզի, յայտնի ուղի մը, գծուած Սբ. Հոգիին կողմէ: «Ինչպէ՞ս պիտի լսեն, առանց մէկուն քարոզելուն»: Պօղոս առաքեալ այս բարձր պատգամէն ներշնչուած կը բացազանչէ, «Վա՛յ է ինծի եթէ Աւետարանը չքարոզեմ»: Յիսուսի «Գացէք բոլոր ազգերը աշակերտեցէք» խօսքին հա-

մաձայն, ամէն հաւատացեալ աւետարանիչ մը, մարդորս մըն է: Ու եթէ հազարաւոր միսիոնարներ իրենց կեանքը տուած են անձանթ ցեղերու եւ ժողովուրդներու համար, ա՛յ որչափ աւելի սիրելի ըլլալու են մեզ մեր ազգին զաւակները: Պօղոս առաքեալ որ ինքզինքը պարտական կ'զգար Յոյնն ու բարբարոսին, ինքզինքը նոյնպէս ըլլալ կը խնդրէր իր մարմնի կողմանէ եղբայրներուն ու ազգականներուն համար: Ինչո՞ւ վասնզի այն մե՛ծ փրկութենէն հակառակ իրենց ընտրութեան, անտեղեակ էին դժբաղդաբար, Անտեղեակ՝ ըսի, նոյնն է պարագան մեր ազգին համար, որ հակառակ իր ունեցած կրօնասիրական տաք զգացումներուն, մեծաւ մասամբ անտեղեակ է փրկութեան մեծ աւետիսէն եւ վերստին ծննդեան իրականութենէն եւ մեղքերու թողութեան վստահութենէն: Անոնց մտքին մէջ հոգեւոր կեանքը անորոշ է, ատոր համար անոնք շուտով նաւաբեկութեան հանդիպեցան եւ կը հանդիպին, անգիտակ իրենց «յոյսին պատճառին» (Ա. Պետ. Գ. 15):

Այս հոգեւոր տգիտութիւնը հայ ազգին ընկերական, բարոյական եւ հոգեւոր կեանքը քայքայելու կ'ապառնայ, իրենց ներկայ աննպաստ միջավայրին մէջ: Անկենդան եւ ծիսակատար, Աստուծոյ օրէնքէն աւելի աւանդութեանց ետեւէն գացող անուանական եկեղեցիէն չենք կրնար ակնկալել այդ մեծ արթնութեան գործը: Ուստի հոգիները կորստեան անդունդին եզերքը թողո՞ւնք: Թողո՞ւնք զանոնք, որովհետեւ տարբեր յարանուանութեան մը կը պատկանին անոնք: Այսպիսի այլապէս փափկանկատութիւն մը եղած մեծ կորուստին առջեւ ներելի չէ, քանի որ հոգիի մը արժէքը անգնահատելի է:

Հոգիի մը փրկութեան մասին անտարբեր ըլլալ, ոճի մըն է եւ չպիտի կարենանք պատասխանատուութենէ ազատիլ ոեւէ պատճառաւորութիւնով մը: Վա՛յ է մեզի եթէ Աւետարանը չքարոզենք: Խնդիր չէ երբ մարդիկ շեղ ներկատուներ կը վերադրեն մեր գործունէութեան: Յիսուս ալ սխալ ճանչցուեցաւ. մերժուեցաւ, նոյնիսկ խաչը հանուեցաւ ճշմարտութիւնը խօսելուն պատճառաւ: Հետեւինք Անոր շաւիղներուն, քանզի առաւօտը կուգայ ու նաեւ գիշերը՝:

Յ. Ն. Ղ.

ՀՈՒ. ԿԵԱՆՔ.....

ՄՐՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՐԿԱՆԱԼ

ԵՔՐ. ԺԲ. 1, 2

Dr. F. B. MEYER

Քրիստոնէական կեանքի շտապը.— «Վազէնք»: Քրիստոնեաներս հանդարտ նստելու չենք որպէսզի հոսանքէն տարուինք, ոչ ալ ծանր ծանր քալելու: Այլ վազելու: Վազելու ենք ասպարէզի մէջ վազողներուն նման: Մեր խորհուրդները կեդրոնացուած մէկ նպատակի մը վրայ՝ բռնօրէն հաւածելու ենք զայն: Մենք որքա՛ն թուլ ենք այս կէտին մէջ: Շատ անգամ պատրաստ ենք մասնակցելու առեւտրական մրցման եւ հարստութիւն գիգելու մրցման, պատրաստ ենք մասնակցելու քաղաքական տաք վիճաբանութեանց կամ ընկերային կեանքը երջանկացնելու համար եղած ջանքերու, սակայն որչա՛փ կը թուլանք երբ խնդիրը կը դառնայ Աստուծոյ համար գործելու շուրջ: Եկէք, մենք ալ սորվինք աշխարհի ամենամեծ հոգեւոր ըմբիշներէն մէկին նման աղաղակել, «Բան մը կայ, որ ետեւի եղածները մոռցած եմ... ու Քրիստոս Յիսուսով եղած վերին կոչումին մրցանակին կը վազեմ»:

Վազելու ենք ամէն ծանրութիւն մէկդի ձը. գաւժ.— Հազարաւոր քրիստոնեաներ կը նմանին ջուրով լեցուած նաւակներու, որոնք թէպէտեւ չեն ընկղմիր, սակայն աշխարհային փափաքներով ու խորհուրդներով թաթաւուած՝ դժուարաւ կը քաշուին երկնային նաւահանգիստը:

Կա՛յ կեանքիդ մէջ բան մը որ արգելք կ'ըլլայ աղօթքի կեանքիդ ու Սուրբ Գիրքի ուսումնասիրութեան: Բան մը զոր ուրիշներ անփնաս կը սեպեն թէեւ, սակայն զքեզ անհանգիստ կ'ընէ ու դատապարտելի քու խղճիդ առջեւ: Եթէ կայ այդպիսի բան մը, վստահ եղիր թէ աստիկա «ծանրութիւն» մըն է: Թերեւս բարեկամութիւն մը որ կը գրաւէ քու ամբողջ ուշադրութիւնդ, հաճոյք մը, ընթերցում մը եւ կամ ժամանց մը որ լեցնելով քու ամբողջ էութիւնդ՝ փնասակար կը դառնայ քու հոգւոյդ ու դուն կ'սկսիս քալել՝ փոխանակ վազելու, եւ ծանր շարժիլ փոխանակ շտապելու:

Դուն թերեւս ըսես, «Միթէ այդ կարգի թանկագին բաներէ մերկանալը իմ կեանքս չա՞ղքատացներ ու չորցներ»: Քա՛ւ լիցի, ամէն անգամ որ կը հրաժարիս քու ներքին կեանքիդ քեզի մատնանշած մէկ հաճոյքէն՝ քու կեանքդ

ողողուած պիտի տեսնես անհուն զօրութեամբ մը քանզի ներքին կեանքը կ'աճի նուիրումով ու կը զօրանայ զոհաբերութեամբ: Ըմբիշը՝ մրցանակը շահելու համար սիրալոյսով կը հրաժարի կարգ մը հաճոյքներէ, հոգ չէ թէ անոր ձեռք ձգած մրցանակը իրեն համար անգործածելի առարկայ մը միայն ըլլայ: Իսկ մենք որ պիտի ընդունինք անեղծանելի պսակ մը, պիտի տեսնենք ուրախութեան ժպիտ մը մեր պաշտելի Տէրոջը դէմքին վրայ եւ լսենք Անոր «Ապրիս»ը, ինչպէ՞ս չյօժարինք հրաժարիլ ամէն արդելքներէ:

Հոլանտական նկարի մը վրայ ներկայացուած կը տեսնենք փոքրիկ մը որ իրմէ շատ սիրուած խաղալիք մը ձեռքէն նետելու վրայ է: Նախ կը զարմանանք անոր արարքին վրայ մինչեւ որ նրկարին մէկ անկիւնը կը նշմարենք սպիտակ աղանի մը որ թեւաբաց կը թռչի դէպի փոքրիկին որ ձեռքերը երկնցնելով զայն բռնելու կը ձգտի: Նմանապէս երբ մեր աչքերը նշմարեն այն հոգեւոր օրհնութիւնները որ մեզի նշան կ'ընեն զիրենք ընդունելու՝ մենք սիրալոյսով կը հրաժարինք մեր ձեռքերուն մէջ գտնուածներէն: Եւ այս է նուիրման ճշմարիտ ճամբան: Մի զբաղիր միշտ «հրաժարելու» խորհուրդով, այլ յաւէտ «ընդունելու» խորհուրդով: Աշխարհ կը խրդաւ մեր վրայ, քանզի անիկա կը տեսնէ միայն այն բաները որոնցմէ կը հրաժարինք, ռակայն եթէ տեսնելու ըլլար նաեւ մեր ընդունածները՝ անիկա իր կարեկցութիւնը իրեն պիտի պահէր: «Աղէկ չափով, կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի տրուի ձեր գոգը»:

Մէկդի ձգելու ենք դիւրաւ պաշարող մեղքը.— Այս խօսքը յաճախ կը լսուի մեր շրթունքներէն, սակայն արդեօք զայն սխալ չե՞նք հասկընար եւ գործածեր: Այս գլուխը կ'սկսի «Ուստի» շաղկապով եւ այս համարը ԺԱ. գլխուն հետ կապ ունի որ կը խօսի «Հաւատք»ի վրայ: Ուրեմն մեզ դիւրաւ պաշարող մեղքը անհաւատութիւնն է: Անհաւատութիւնը շատ անգամ բարոյական պատճառներու մէկ արդիւնքն է: Հոգին Աստուծոյ դէմ կը գործէ ու ինքզինք արդարացնելու համար կ'սկսի տարակուսիլ Աստուծոյ գոյութեան: Քեզի ծանօթ ամէն մեղք հեռացուր քեզմէ: Կարգա Սուրբ Գիրքը նոյնիոյ եթէ կը տարակուսիս անոր ներշնչուած ըլլալուն: Սպասէ, աղօթէ: Քու ունեցած լոյսիդ համեմատ ապրէ ու անհաւատութիւնը ինքնին պիտի փարատի: Անշուշտ մենք զփութարութիւններու պիտի հանդիպինք եւ շատ համբերութեան պիտի կարօտինք, բայց միայն

ընթեան երկու աղբիւրներ բաց են մեր առջեւ:

Ա. Յիշենք թէ մեր կեանքի ընթացքը ծրարագրուած է մեր երկնաւոր Հօրմէն: Անիկա զիտնալով մեր զփութարութիւնները՝ մեր պէտքին համեմատ ալ շնորհք պիտի պարգեւէ մեզի: Անոր կամքը կատարել մեզի համար հանգստութիւն եւ երկինք կը նշանակէ:

Բ. «Յիսուսի նայինք»։ Աչքերնիս դարձնենք անցեալ յաջողութիւններէ եւ ձախողութիւններէ, մարդկային գովեստներէ ու կշտամբանքներէ եւ նայինք Յիսուսի: Անոր նայիլը մեզի սովորութիւն ընենք: Թող մեզի բնական ըլլայ նայիլ Անոր սիրելի, հեզ, քաղցր դէմքին՝ ուր որ ալ գտնուինք, գործի վրայ, փոքրիկ սենեակի մը մէջ, փողոցին վրայ թէ խուռն բազմութեան մը մէջ: Վստահ եղիր թէ Սուրբ Հոգին կարող է այս սովորութիւնը քու մէջը յառաջ բերել:

Եւ ամէն բանէ աւելի յիշէ թէ քու Տէրդ ալ քալած է այս ճամբէն, պայքարելով քու զրփուարութիւններուդ եւ տրտմութիւններուդ դէմ, սակայն առանց մեղքի: Տե՛ս թէ Անիկա ժպիտը դէմքին՝ կայնած քեզ վարձատրելու կը սպասէ եւ Անոր մէկ քաղցր ժպիտը կարող պիտի ըլլայ փարատելու քու ծանրութիւններդ եւ անհաւատութիւններդ:

Աստուած ինչ որ կը պահանջէ մեզմէ՝ անոր լաւագոյնը կը պարգեւէ մեզի: Մեզմէ կ'առնէ բնականն ու մարդկայինը եւ անոր փոխարէն կուտայ Աստուածայինը: Վստահէ Անոր, համարձակէ տալու որպէսզի առնես, համարձակէ մերկանալու որպէսզի հագուես: Թարգ. Ն. Մ.

ԲԱՅՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ.—

«Որպէսզի դուք ալ մեզի հետ հաղորդութիւն ունենաք, եւ մեր հաղորդութիւնը Հօրը հետ է՝ ու իր որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ»:

Հետեւեալ էջերը գրուեցան որպէսզի բոլորն ալ բաժնեկից ըլլան այն մեծ ուրախութեան ու ազատութեան որ կայ անամպ ընկերակցութեան մը մէջ, այս կարելի է Տէր Քրիստոսով, որուն առջեւ ամէն գայթակղութիւն եւ քննադատութիւն կը մեռնի:

Ինք (Օգոստինոս) իր մօրմէն սորված էր ատել շաղակրատութիւնը: Իր ճաշասեղանին վրայ համար մը քանդակած էր, զոր երբեմն անհրաժեշտ կը տեսնէր իրեններուն ուշադրութեան տալու:

«Ով արատէ անունն ընկերին,

Պէտք չէ ճաշէ ինձ հետ կրկին»:

(E. Mac fougall St. Augustine)

I

—«Այո, լաւ մարդիկ են, բայց... է՛հ, գիտէ՞ք որ շատ ալ վստահելի չեն, երբեք չեն կրնար գիտնալ թէ վերջը ինչ գոյն պիտի առնեն»։ Մի քանի բարեկամներ բոլորուած էին թէյի սեղանին շուրջը։ Անոնք իրենց շրջանակին մէջ ճանչեցուած էին իբր հոգեւոր գործիչներ։ Հասարակ օր մ'էր, հասարակ ալ առիթ մը, եւ թերեւս ընթերցողը խորհի որ շատ ալ հասարակ բան մ'է այդպիսի պարագայի մը ասանկ գիտողութիւն մը լսելը։ Քիչ առաջ անոնք օդին արտակարգ երեւոյթներուն վրայ կը խօսէին եւ ապա ինչպէս որ յաճախ կը պատահի, խօսակցութիւնը դարձաւ դրացիներու վրայ։ Յիշուեցաւ անոնց լաւ կողմերն ու բարի գործերը որք հիացման ու զնահատանքի արժանացան, բայց կերպով մը խօսակցութիւնը գերակշռօրէն անոնց տկար կողմերուն ու կեանքի մէջ ունեցած ձախորդութեանց վրայ դարձաւ։ Ինչո՞ւ, կարծես թէ գաղտնի հրապուրիչ գօրութիւն մը կայ որ մեր միտքը աւելի ուրիշներուն տկարութեանց վրայ կը կեդրոնացնէ քան թէ անոնց առաքելութեանց։

Վերոյիշեալ քննադատութեանց ըսուելէն քիչ յետոյ խնդրոյ առարկայ եղող նանձերը եկան։ Խօսակցութիւնը քիչ մը ժամանակ եւս շարունակուեցաւ։ Գիշերուան շուքերը կ'սկսէին մթագնել սենեակը երբ յանկարծ տարօրինակ ու քստմանեցողիչ բան մը պատահեցաւ։ Մինչ մէկ ըսպէ լոռութիւն տիրեց եւ այցելուները կը պատրաստուէին մեկնելու, տիրող կէս մթութեան մէջ վառարանին վերեւ, որոշ բառեր սկսան իրարու յաջորդել կազմելով հետեւեալ շփոթեցուցիչ խօսքը, «Այո, Տէր եւ Տիկին Ա. լաւ մարդիկ են, բայց... է՛հ, գիտէ՞ք որ շատ ալ վստահելի չեն, երբեք չեն կրնար գիտնալ թէ վերջը ինչ գոյն պիտի առնեն»։

Կրնաք երեւակայել ներկաներուն զգացումները, մինչ Տէր եւ Տիկին Ա. վերադառնալու պահուն ուխտեցին ալ երբեք ոտք չդնել այդ տունը։ Այն խօսակցութիւնը որ փոխադարձ մերձեցման մը կրնար ծառայել, գծաւթեան մը ծնունդ տուաւ։

II ՔՆՆԱԳՐԱՆԻՔԻ ԲԱՆԹԵՐԻ ԱՆԷԾՔ ՄԷ

—«Երեւակայական պատմութիւն մ'է» պիտի ըսես. այո, բայց չեմ կարծեր թէ անոր զխաւոր կէտը ընթերցողներէն շատերուն կեանքէն դուրս ըլլալ։ Քրիստոնեաներէն շատեր երբեք չենք խորհի կամ հասկնար թէ ի՞նչ ըսել է բացակայ բարեկամներ քննադատելը։ Եթէ փոր-

ձես ամբողջ օր մը բնաւ բան մը չըսել մէկու մը ետեւէն, զոր չպիտի կրնայիր իր երեսին ըսել, շուտով պիտի հասկնաս թէ այս սովորութիւնը անզգալար արմատացած է կեանքիդ մէջ։ Մենք բոլորս ալ՝ գիտենք թէ ինչպէս անոր պատակ կերպով կը խօսինք ուրիշներու տկար կողմերուն վրայ։ Մեր հոգեւոր կեանքին վիճակն է որ կարելի կ'ընէ աւելի ուրիշին պարտութեանց քան թէ յաղթանակներուն, պակասներուն քան տաղանդներուն վրայ խօսիլը։

—«Բայց վերջապէս միայն պատմութիւն մ'է եւ ձեր ըսածին պէս չէր կրնար վերջանալ, ուստի ի՞նչ փաստ կար այդպէս խօսելուն մէջ քանի որ խնդրոյ առարկաները երբեք չպիտի լսեն խօսուածը»։ Թերեւս այսպէս առարկուի, ուստի խնդիրը դարձնենք։ «Խօսողին կամ լսողին ի՞նչ օգուտ ունի ուրիշներուն յանցանքներուն եւ սխալներուն վրայ խորհիլը։ Կեանքը ազդեցիկ ըլլալուն համար դրական ըլլալու է։ «Ի՞նչ փաստ կայ» հարցում մ'է որ արդէն իր մէջ ժխտականի կասկած մը ունի։

«Սէրը բնաւ ուրախ չէ երբ ուրիշներ կը սըխալին»։ Գիտեմ թէ շատ յաճախ այս խօսակցութիւնները գիտակցօրէն յիշեալ խօսքին հակառակելու համար չէին։ Թերեւս այս է որ էն առաջ կը յիշենք երբ կ'աշխատինք խօսակցութիւն մը հիւսելու, զի միշտ բարի ու ազնիւ խորհուրդները չեն որ գիտակից խորհուրդներու ծայր կուտան։

Սակայն կը մոռնանք Տէրոջ մէկ պատկառազգու խօսքը, «Ամէն դատարկ խօսքի համար զոր մարդիկ կը խօսին, դատաւարանին օրը հաշիւ պիտի տան։ Վասնզի քու խօսքերէդ պիտի արդարանաս եւ քու խօսքերէդ պիտի դատապարտուիս»։ Պարա՛ւ խօսքեր. ընկերային շրջանակներու եւ թէյասեղաններու ընթացքին մեր ունեցած խօսակցութեանց որքա՛նը կարելի է այսպէս կոչել։ Եւ եթէ այդպէս է, կրնա՞նք տակաւին պնդել թէ, բացակայի մը սխալները համբել շիտակ է, քանի որ անկէ դրական օգուտ մը չելլեր։ Անկէ՞ղծ ըլլանք, այս քննադատութիւնները նոյնիսկ եթէ երեւութապէս ազատ ըլլան դառնութենէ, պիտի օգնէ՞ին մեզի իրարու ներկայութիւնը ազատօրէն վայելելու եւ սրտերը ուրախ սիրով մը միացնելու ինչ որ ամէն քրիստոնէական շրջանակի խտեալը պարա՛ւ ըլլալ։ Քանի՜ կղպուած կեանքեր կան, որք միայնակ կ'ապրին որովհետեւ կը վախնան որ երբ պարպելու ըլլան իրենց սրտին բեռը, այն անհատը որուն կը վստահին, զիրենք չպիտի հասկնայ,

կամ պիտի քննադատէ, կամ պիտի թերանայ վստահութեան նուիրականութիւնը յարգելու: Ձեռ կարծեր որ մէկը իր սիրտը մեղի բանալ պիտի ուզէր երբ լսէր թէ մենք ուրիշին ետեւէն կը խօսինք գործուած սխալներու մասին:

Բայց գիտենք որ շատ յաճախ այս պարագայն գործը խօսքերուն հետեւանքը եղած է զգացումներու վերաւորում, բարեկամութեան խզում կասկած կամ քրիստոնեաներու մէջ իրական միութեան մը ողբալի բացակայութիւնը: Ծնրադրենք Աստուծոյ առջեւ, այն Աստուծոյն որ սուրբ է եւ զոր միայն արտով մաքուրները պիտի տեսնեն, նկատենք այս խնդիրը եւ խոնարհութեամբ ու ամօթով իբր մեղք մը ընդունինք զայն:

Խորհեցէք Յուդա Իսկարիովտացիին վրայ որ նաեւ մատնեց զԱնիկա: Կարդա Յովհ. ԺԳ. 24-30 եւ պիտի տեսնես որ աշակերտներէն ոչ մէկը հասկցաւ թէ Յուդան ի՞նչ պիտի ընէր: Տէրը ըսկիզբէն գիտէր զայս, բայց Անոր մէջ չկար այն կեղծ դուրժը որ ըսել կուտայ, «Գիտէ՞ք շատ կը ցաւիմ, կը վախնամ որ այսինչը անքնական կ'ըսկըսի դառնալ: Կը վախնամ որ սահմանէն անդին կ'անցնի»: Այս տեսակ խօսք մը կը թառամի եւ կ'այրի Քրիստոսի ներկայութեան: Ան որ մեր Օրինակն ու Փրկիչն է՝ ստիպէ զմեզ մեր անձերուն հանդէպ անկեղծ ըլլալու մինչ կը կարդանք այս տողերը: Թէ որ մեր խղճմտանքը արթնցած է պարտինք կամ Անոր հնազանդիլ կամ զի՞նքը մերժել: Քանզի կարելի չէ անհոգ կերպով այս խնդիրը մէկզի թողուլ որքան որ կը գիտակցինք զառնութեան արժատին սպառնալիքին:

III ԳՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Թերեւս ոմանք խորհին, «Ուրեմն ի՞նչ կըրնանք խօսիլ ընկերական շրջանակներու մէջ»: Եթէ իբր քրիստոնեաներ մեր նպատակն է դժբախտ օգուտներ հանել խօսակցութենէ մը, դժուար չէ զայն իրականացնել: Դէ որ քրիստոնէական շրջանակի մը մէջ ենք, արդէն իրապէս չարժեք խօսիլ օգին վրայ, որ երբեք սովորականէն այնքան տարբեր չէ որ խօսակցութեան նիւթ ըլլալ արժէ: Մեզմէ շատերուն դժուարութիւնը հոն է որ կ'ամչնանք ուրիշներու առջեւ մեր Տէրոջ վրայ խօսելու: Ոմանք կը խորհին, «Շիտակ չէ Իր վրայ խօսիլ թէյի ժամանակ» բայց անկասկած շատ բան կը կորսնցնենք երբ ամէն առիթ չենք գործածեր, ուրիշին տալու Տէրոջ մեղի հաղորդած խորհուրդներն ու լոյսը: Մեր սիրտերը կը կարօտին կամ պէտք է կարօտին զի՞նքը աւելի մտերմօրէն ճանչնալու եւ

որքան կը կորսնցնենք երբ չենք սորվիր թէ շատ բնական է խօսիլ մեր սիրած Փրկչին մասին ուրիշ քրիստոնէից հետ որ զի՞նքը կը սիրեն:

Ընդհանրապէս պարագայ խօսքերը ծոյլ մտքերու արդիւնք են: (Յունարէնի մէջ Մատթ. ԺԲ. 36ի «Դատարկ բառը ծոյլ կը նշանակէ») Բերանը սրտին աւելցուքէն կը խօսի, եւ թերեւս մեր հիմնական կարօտութիւնը հանգստեան պահելուն խորհրդածութեանց դաստիարակութիւնն է: Օրուան վախճանին մինչ կը նստինք հանգչելու, մեր խորհուրդները ի՞նչ բանի ետ կ'անդրադառնան: Հանգստեան պահուն մտքին ամբարումն է որ մեծաւ մասամբ կ'որոշէ խօսակցութեան ընթացքը: Ոմանք իրենց պարագայ ժամերը կարգաւոր կ'անցնեն, բայց նոյնիսկ շատեր որք քրիստոնեայ կը կոչուին, կը նախընտրեն գլուխին լեցնել աժան վէպերով որք յաճախ կը ընթացնեն խիղճը, կը վարժեցնեն սխալներ գրտնելու, քննադատելու, կամ աւելի դէշին. մինչդեռ շինիչ եւ հետաքրքրական ընթերցմանց ճիւղ բաժին մը որ բարձրացնող խորհուրդներու հորիզոնները կրնայ բանալ իրենց առջեւ, կ'ապաստմանուն տրամադրութեան տակ:

Ծովային ճամբորդութեանց ընթացքին, ըստիպուած եղած եմ նկատելու որ նախապատուութիւն կը տրուի անարժէք գրականութեան եւ շատ հազուադէպ եղած է որ ճամբորդներուն ձեռքը մնայուն արժէք ներկայացնող գիրք մը տեսնեմ:

Պարզապէս ծուլութիւնն է որ մէկը կը մղէ օգտակար գիրքի մը կամ կենսագրականի մը փոխան նախընտրելու վէպի մը գրգռութիւնը: Ասիկա Աստուծոյ ներկայացնելիք առարկութիւն մը չէ, եւ որքան շատ որ սկսի ինքզինքը կրթել, այնքան արագ պիտի յաջողի իր միտքը տեսական խորհուրդներով մթերելու:

Ոմանք քիչ կը կարդան բայց իրենց պարագայ ժամերը խորհրդածելով կ'անցնեն: Այս պահերուն Աստուած մեր խորհուրդները պահէ ցած եւ անպատուաբեր խորհուրդներէ եւ զանոնք Իրմով լեցնէ:

Այսպէս կը տեսնենք թէ շատ բաներ կան զորս կրնանք խորհիլ եւ խօսիլ որք պիտի ազնւացնեն միտքը եթէ նախընտրենք մեր միտքերը շիտակ կրթելու: Ապա ամէն բանէ վեր Տէրը կայ զոր կը սիրենք եւ կը ծառայենք: Թէ որ վերը յիշածս տեսակէն խօսակցութեան մը վրայ զարնա, չպիտի՞ ամչնայինք ուրիշը քննադատելնու մէջ բռնուելնու համար: Հսկենք թէ ի՞նչ կը կարդանք կամ կը խորհինք:

ԿԵՆԱՅ ԱՇՈՒՆԵՐԵՆ

ԱՆՈՐ ՍԵՐԸ

Օրին մէկը հոգեւոր պաշտօնեայի մը տունը այցելութեան մտաւ իր տասնըջորս տարեկան որդւոյն ուսուցիչը: Անոնց միջեւ հետեւեալ կարճ խօսակցութիւնը տեղի ունեցաւ:

— Կը փափաքէի Ձեր որդւոյն մասին տեղեկութիւն քաղել. արդեօք հիւանդ է ան:

— Հիւանդ, բայց ինչո՞ւ:

— Որովհետեւ նա ո՛չ երէկ, ո՛չ միւս օր և ո՛չ ալ այսօր դպրոց եկաւ:

— Դպրոց չեկա՞ւ, ինչպէ՞ս կարելի է այս. չէ՞ք սխալիր Պրն. Պ.

— Անկարելի է որ սխալիմ, քանի որ տեսածս այս է. ես խորհեցայ միայն թէ կարելի է հիւանդ է, ուստի յարմար դատեցի գալ եւ զԶեզ տեսնել:

Հոգեւոր պաշտօնեան սարսափահար շնորհակալութիւն յայտնեց այս հոգածութեան եւ աչալըրջութեան համար: Ուսուցիչը հրաժեշտ տալով բաժնուեցաւ, հայրը ինկաւ իր աթոռին վրայ եւ խորասուզուեցաւ տխուր մտածութեանց մէջ:

Յանկարծ մեծ դուռին զանազակը հնչուեցաւ: Հայրը դանդակը զարնուելուն կերպէն հասկնալով թէ որդւոյնն է, վեր բարձրացաւ ու գնաց դուռը բացաւ տուն վերադարձող որդին ներս ընդունելու:

Հըր սաստիկ տրտմութեամբ համակուած դէմքը անմիջապէս գուշակել տուաւ որդւոյն թէ իր ըրած այդ անկարգութիւնները երեւան ելած էին: Լռութեամբ նա հնազանդեցաւ հօրը ձեռքի նշանին եւ հետեւեցաւ անոր դէպի աշխատասենեակը:

Հայրը զգուշութեամբ դուռը զոցելէ յետո խիստ քաղցր ձայնով մը խօսեցաւ որդւոյն «Ուսուցիչդ հոս էր քիչ մը առաջ եւ պատմեց թէ երեք օրէ ի վեր դպրոց չես յաճախեր, իսկ մենք կը խորհէինք թէ դուն հոն ես: Դուն զմեզ գիտնալով խաբեցիր: Ձեմ կրնար պատմել քեզ թէ այս խնդիրը որքա՞ն ցաւ կը պատճառէ ինձ, մինչդեռ ես իմ պատուաւոր որդւոյս վրայ որքա՞ն հպարտ կ'զգայի ինքզինքս: Որքա՞ն կը վստահէի քեզի տղաս: Ու դուն կրնայիր կենդանի ստախօս մը հոս ու հոն շրջիլ: Տղաս, գիտնայիր թէ որքա՞ն վիշտ կը պատճառէ ինձ այդ բանին վրայ լոկ մտածելը:

Այս խօսքերէն իւրաքանչիւրը մէկիկ մէկիկ որդւոյն սրտին մինչեւ խորերը ծակծկեցին: Ե-

թէ հայրը անմիջապէս յանդիմանելով զինքը խիստ պատժոյ մը ենթարկէր, աւելի դիւրաւ կըրել կրնար քան այս մեղմ խօսքերը: — «Եկուր», ձայնեց ապա հայրը, «աղօթենք միասին»: Այս բանը իրեն պէս յանցաւորի մը համար, որ բընականաբար աւելի պիտի սիրէր փախչիլ աղօթքէն, բոլորովին անբաղձալի էր, քանզի այդպիսի յանցաւոր պարագայի մը տակ մարդ Աստուծոյ մօտենալէն կը քաշուի:

Երկուքն ալ ծնրադրեցին: Հայրը իր սիրտը պարպեց Աստուծոյ առջեւ իր աղօթքին մէջ եւ որդին լռութեամբ մտիկ կ'ընէր: Իրեն այնպէս կուգար, որպէս թէ հայելիի մը առջեւ կը գտնուէր, որուն մէջ նա իր իսկութիւնը եղածին պէս կը տեսնէր: Օ՛հ, գեղեցիկ պատկեր մը չէր այդ: Թրջած աչքերով երկուքն ալ ոտքի ելան: Յետոյ հայրը կրկին խօսք առաւ: «Տղաս, մեր կեանքին մէջ օրէնք մը կայ որ միշտ ի գօրու է, այսինքն թէ յանցանքը վիշտին անբաժանելի ընկերն է: Մէկը առանց միւսին կարելի չէ երեւակայել: Ուր ցաւ մը տեսնես, ապահովաբար պիտի գտնես որ մէկուն յանցանքը ասորը ետեւ կը կենայ: Իւրաքանչիւր յանցանքի կը հետեւի ցաւ մը. ոեւէ մէկը կրելու է զայն, սովորաբար անոնք որ մեզի ամենէն մօտ կը գտնուին եւ ամենասիրելի են»:

Կարճ լռութենէ մը յետոյ շարունակեց, «Գիտես թէ դուն անիրաւութիւն ըրիր. այս պատճառաւ կ'երթաս վեր ձեզունին միջնասենեակը, հոն քեզի համար անկողին մը կը պատրաստենք եւ կերակուրի ժամանակ ուտելիք բան մը կը զրկենք քեզի, հոն կը մնաս այնքան օրեր, որքան որ շրջեցար որպէս մարմնացեալ ստախօս, այսինքն երեք օր եւ եւեք գիշեր:

Տղան պատասխանելու խօսք մը չգտաւ. լռութեամբ աստիճաններէն վեր բարձրացան միասին, հոն հայրը համբուրեց իր որդին եւ զայն առանձին ձգեց խորասուզուելու իր մտածութեանց մէջ:



Ընթրիքի ժամանակ ծնողքը նստած էին իրարու դիմաց. բայց կերակուրը համ չունէր, անոնք չէին խօսեր իրարու հետ կարծես իրարու արգելք չըլլալու համար, քանզի գիտէին թէ երկուքին ալ խորհուրդը վերը տղուն վրայ էր: Սեղանը վերցուելէն յետոյ հայրը ուզեց թերթ կարդալ, այսու ամենախիւ ակնոցը այսօր այնքան անորոշ կը ցուցնէր ու թերթն ալ այնքան

գէշ տպագրուած էր: Մայրը ուզեց քիչ մը կար կարել, բայց թելը բնաւ ասեղին ծակէն անցնել չէր ուզեր: Վերջապէս քունի ատեն եկաւ, բայց անոնց արտեւանունքներուն մէջ քուն չէր մըտնէր: Ժամացոյցը զարկաւ տասնըմէկ, տասներկու, կէս դիշերէն վերջը ժամը մէկ, երկու, հայրը այլեւս չկրնար դիմանալ, «Մամա, ալ չեմ կրնար... ես վեր կ'երթամ տղուն քով»:

Այսպէս, նա բարձր առած վեր բարձրացաւ դէպի տղուն պառկած սենեակը, եւ այնքան մեղմօրէն որքան որ կրնար որպէսզի որդին չարթնցնէր: Սակայն երբ բացաւ դուռը, գտաւ նա իր որդին բաց աչքերով, եւ մինչ լուսինը պատուհանէն կը լուսաւորէր պատանիին երեսը, անոր աչքերէն արտասուքները մարգարիտի պէս կը փայլէին:

Նա պառկեցաւ որդւոյն քով թեթեւ վերմակի մը տակ եւ հայր ու որդի զիրար զրկեցին պընդօրէն, արտասուքները իրար խառնուեցան, — քանզի անոնք միշտ լաւ բարեկամներ էին — ու յետոյ հանդարտութեամբ քնացան մինչեւ առաւօտ: Միւս իրիկունը քնանալու ժամը զարկածին պէս, «Գիշեր բարի մամա» գոչեց հայրը, «ես կ'ելլեմ տղուն հետ քնանալու», կրկին այդ դիշեր ալ տղուն յանցանքի պատիժին բաժնեկից եղաւ. երբ որդի իրիկունը տարբեր չեղաւ, հայր ու որդի պատիժը միասին քաշեցին:

Կը զարմանա՞ս սիրելի ընթերցող, որ այս պատանին Աստուծոյ զօրաւոր մէկ մարդը եղաւ, որ կրակէ խանդով եւ այրող սրտով մը փրկութեան աւետարանը ք-րոզեց Զինաստանի ներքին գաւառներուն մէջ:



Ի՞նչ յարմարադոյն օրինակ այն լայնածաւալ եւ համբերատար ու զոհաբերող սիրոյն, զոր մենք կը տեսնենք երկնաւոր Հօրը մէջ: Ա՛հ, այն մեղմ սէրը զոր ցոյց տուաւ մարդկութեան հանդէպ, ամէն նկարագրութենէ եւ ամէն օրինակէ անդին կ'անցնի: Աստուած այնպէս սիրեց աշխարհը...

Անիկա չէր կրնար մեղքը մէկզնի վերցնել, անիկա կայ եւ ամէն ատեն զգալի է: Անիկա մեղքին արդիւնքն ալ չէր կրնար վերցնել, այդ պատճառաւ վար իջաւ մեզի իր Որդւոյն կերպարանքին մէջ եւ մեզի հետ ու մեզի համար ցաւ քաշեց որպէսզի մեզ մեղքի անէծքէն ազատէ:

Յիսուս Քրիստոսի մէջ կը ճանչնանք զԱստուծո՞ւ, սիրելի ընթերցող, Անոր մէջ կը գտնենք

Աստուծոյ սիրոյն լեցուն սիրտը, Անիկա է հայելին, որուն մէջ կը տեսնենք մեր խղճալիութիւնը, մեր մեղաւորութիւնը, նաեւ մեզի համար անվերջ ցաւ քաշող Փրկիչը: Անիկա այս բանը բնաւ որպէսզի մենք մեղքը ատենք եւ աշխարհի թոհ ու բոհին մէջէն կրկին գտնենք ճամբան դէպի Հօրենական տունը եւ Հօրենական սիրտը:

Ուրեմն եթէ դեռ մեղքէն մաքրուած չես, կ'ուզե՞ս եւ կրնա՞ս դեռ անոր մէջ մնալ, կրնա՞ս դեռ մեղքը սիրել, կրնա՞ս դեռ անհնազանդիլ զքեզ այնքան սիրող Հօրը սրտին, կրնա՞ս դեռ խթանիլ դէմ կից զարնել:

Ետ դարձիր, հոգի ետ, դէպի քու հանգիստդ ու Տէրը զքեզ պիտի հանգչեցնէ ճշմարիտ հանգիստով մը: Մի՛ ուշանար, Հօրը սիրտը պատրաստ է զքեզ այսօր ընդունելու:

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԽԱԶԻՆ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆԸ

ԳԱՂ. Ե. 11

Վատարեւապէս յայտնի իրողութիւն մըն է թէ ամէն ուր որ Տէր Յիսուս Քրիստոսի խաչը ամէնէն հաւատարմօրէն քարոզուած եւ ներկայացուած է, հոն անիկա շատերու յոյս եւ նոր կեանք բերելով հանդերձ՝ զրեթէ միշտ դժուարութեանց դռներ բացած է:

Անիկա ուր որ գացած է հոն հակառակութիւն յառաջ բերած է: Ինչպէս որ Անիկա առաջին օրերուն հրեաներուն զայլթակողութիւն եւ յոյներուն յիմարութիւն էր, անկէ ի վեր ալ միշտ անընդունելի եղած է ոչ միայն աշխարհի մարդոց, այլ նաեւ կրօնական համայնքներու:

Մենք անվարանօրէն կը հաստատենք թէ անիկա ուրիշ ոեւէ ժամանակէ աւելի ճշմարիտ է այսօր, հակառակ այն իրողութեան թէ խաչը աշխարհի ամենէն ժողովրդական խորհրդանշանն է: Քրիստոնեայ աշխարհին մէջ հազիւ թէ զըտնելի քաղաք մը ուր ճարտարապետութիւնը, արուեստից թանգարանները, զրականութեան հաւաքածոները, երաժշտանոցները եւ կրօնական հաստատութիւնները այս սուրբ նշանին հանդէպ մեծարանք եւ պատիւ չյայտնեն:

Անիկա աւելի խորունկ բանի մը համար տըրուած յարգանք մը կրնայ նկատուիլ, բայց անհաճիղ այդ աւելի խորունկ բանն է որ բացարձակապէս անընդունելի է քրիստոնեայ ազգերու մե-

ծագոյն մասին եւ աշխարհի համար: Այսօր կարգ մը միսիոնարական ձեռնարկներու որոշ մարզերուն մէջ նոյնիսկ հարկաւոր դատուած է դասագիրքերու եւ երգարաններու մէջէն խաչին յիշատակութիւնը վերցնել որպէսզի չգայթակղեցնէ:

Քրիստոնեայ եկեղեցւոյն քարոզներէն եւ ուսուցումներէն շատերը կամ կը յուսականանան «պատմական Յիսուս»ով մը, որ կը ներկայացնէ առանց խաչի Քրիստոս մը, եւ կամ Անոր մահուան շատ փոխուած նշանակութիւն մը կուտան:

Եւ տակաւին՝ անտարակոյս հարկաւոր է նախ Ս. Գիրքը մէկզի նետել որպէսզի կարենանք մէկզի ձգել այն իրողութիւնը թէ Աստուծոյ խօսքին բոլոր մասերը կը միանան յայտարարելու որ խաչը Աստուծոյ փրկութեան ճամբան է, Աստուծոյ բաւարար ճամբան եւ Աստուծոյ միակ ճամբան:

Ասկէ դատ, անտարակոյս շատ պարզ է որ դարերու ընթացքին խաչը եղած է այն հզօր միջնորդը որով Աստուած Իր փրկելու կարողութեան բոլոր զօրութիւնը յայտնած է: Ան կը տիրապետէր նորկտակարանի օրերուն: Խաչին այս կարեւոր եւ կենսական երեւոյթին վերադարձնելուն էր որ ծնունդ տուաւ այն շարժումներուն որ յատկանշուեցան Լուստերի, Մարիի, Փիլիի, Յովնի, Էտուրազի, Հուայթիլի, Ուէսլիներու, Սիլվերսթրի եւ ուրիշ շատ մը Աստուծոյ մասնաւորապէս պատուելու մարդոց անուններով:

Հիմա կը հարցնենք թէ խաչը ինչու համար միշտ այսպէս ներկայութիւն տուող եւ գայթակղութեան պատճառ եղած է: Ի՞նչ է պատճառը որ այսօր ինքզինքնին աւետարանական դաւանող մեր շատ մը հաստատութիւններուն, յարանուանութիւններուն, քրիստոնեայ տուններուն, տեղական եկեղեցիներուն եւ անհատական քրիստոնէից կեանքներուն մէջ տեղի ունեցող շատ մը ըմբոստութեանց հետեւ կը գտնուի ան:

Ասոր պատասխանել պիտի ջանանք, բայց նախ գանազանենք.

Խաչին դիւցազներգութիւնը եւ կամ անոր գեղագիտութիւնը չէ ներկայութիւն պատճառողը:

Ձոհողութիւն, տառապանք, անշահախնդիր նուիրում, ուրիշներու բարիքին համար խոնարհեցուցիչ ծառայութիւն ժամանակներու վատ հոսանքին դէմ թիավարելու տենչանքին յանձնարարութիւն եւն. օգային խորհուրդներ եւ կարգախօսներ են, որոնցմով, բազմութիւններ կը զըբաւուին եւ կը գերուին:

Աստուածաշունչին կողմէ խաչին տրուած ա-

ւելի խորունկ նշանակութիւնն է որ զրդուութիւն յառաջ կը բերէ, եւ ասիկա կը տեսնուի մէկ կամ երկու որոշակի սահմանուած օրինակներով:

1. Խաչը կը դատապարտէ աշխարհը: Քրիստոս Իր խաչով հին եւ նոր աշխարհներուն միջև մեծ պարագ մը ստեղծեց, պարագ մը որ չի կրնար կամըջուիլ:

Խաչին երկու կողմերը կը տիրեն հրկու որոշապէս տարբեր դրութիւններ, արժէքներու շարքեր, դարու ծանր չափանիշներ, օրէնքի կարգեր: Ասոնց իւրաքանչիւրը ոչ միայն միւսէն հիմնովին տարբեր է ձեւով, այլ անոր անհաշտ եւ յաւիտեանական հակառակորդն է:

Խաչը կը պահանջէ շահերու, տեսակետներու յարաբերութիւններու եւ միջոցներու բացարձակ գանազանութիւն:

Ան փրկուածին եւ ոչ փրկուածին, կենդանիին եւ մեռածին միջև վերջնական տարբերութիւնը կը գծէ:

Պօղոս առաքեալ կ'ըսէ թէ խաչին միջոցով ինք «աշխարհի խաչը եղած է, աշխարհ ալ իրեն»:

Աստուծոյ խօսքը հաստատօրէն կը յայտարարէ թէ ժամանակը չար է, եւ թէ «ամբողջ աշխարհը չարին իշխանութեան տակ է», թէ՛ աշխարհի կերպերը, շարժառիթները, նպատակները, իտէալները, երեւակայութիւնները ճիշդ հակառակն են Աստուծոյ ունեցածներուն, եւ թէ աշխարհ բոլորովին անկարող եղած է Աստուծային մտքին յայտնութիւնը ստանալու, ինքնաբերաբար աճելու եւ Աստուծային պատկերին հասնելու, Աստուծոյ իրական հաղորդակցութիւնը վայելելու եւ գնահատելու եւ կամ Աստուծոյ հետ գործակցելու առանձնաշնորհին արժանանալու: Ասոնք միմիայն վերադարձնած հոգիին գիտակցութիւնը, կարողութիւնները եւ յարաբերութիւններն են:

Խաչին այս վճիռը, դատապարտութիւնը եւ պահանջն է որ անըմբռնելի եւ զրգռիչ է նոյնիսկ դաւանող քրիստոնեաներու շատ մեծ մասի մը համար: Ասկէ դատ անհատական քրիստոնեայ կեանքին եւ եկեղեցիին մէջ շատ աշխարհաբոլորութիւն գտնուիլն է որ խաչին բուն նպատակը իրագործելու մէջ անոնց ազդեցութիւնը կը չեղօքացնէ:

2. Խաչը կը դատապարտէ մարմինը: Անով Աստուծոյ խօսքը կը յայտարարէ թէ «մեր հին մարդը Քրիստոսով խաչը եղած է»: Մէկը ամենուն համար մեռաւ, ուրեմն ամէնը Անով մեռան, որպէսզի անոնք որ կ'ապրին, ալ ոչ թէ իրենց անձին համար ապրին, հապա Անոր համար: Մենք

Հանացինք հին ստեղծուածին կեանքէն մաս մը նոր ստեղծուածին մէջ բերել, բայց Աստուած չուզեց: Ինչպէս մարդկութեան պատմութիւնը Աստուծոյ համար Գողգոթայի վրայ վերջ գտաւ: Անկէ ի վեր Աստուած միմիայն նոր ստեղծուածով է որ կը հետաքրքրուի, սակայն մեր մարդկային կարողութիւնները ինչպէս նաեւ մեր պակասութիւնները, ինչ որ մենք կը կոչենք մեր մարդկային լաւ կողմերը ինչպէս և վատ կողմերը, մեր բարութիւնը ինչպէս և մեր չարութիւնը, մահուան մէջ պարփակուած են: Ասկէ վերջ մենք կոչուած ենք ապրելու ոչ թէ մարդկային այլ Աստուածային մակարդակի մը վրայ: Մարդկայնօրէն՝ մենք ոչ մէկ բան ունինք Աստուծոյ ընդունելի: Միշտ ալ մարդկային տարրի մը, նախասիրութեան մը կամ հակակրանքի մը, քմահաճոյքի մը, փառասիրութեան մը և կամ անձնական շահի մը ներկայութիւնն է մեր անձին մէջ որ կ'անդամալուծէ Աստուծոյ իսկական հոգեւոր գործը: Եթէ կ'ուզենք որ Աստուծոյ նըպատակները մեր կեանքին մէջ իրագործուին, ատոր միակ ճամբան է գիտնալ և ընդունիլ թէ ոչ թէ միայն մեր մեղքերը այլ մեր անձերն ալ Քրիստոսով խաչին տարուած են: Տարօրինակ է որ հակառակ որ մեր անձն է մեր աղէտին բուն պատճառը, մեր կեանքը նեղողը, տակաւին այսօր մեր կը դանդաղինք ընդունելու թէ մենք Քրիստոսով խաչը ելած ենք և չենք թողուր որ խաչը մեր մահը գործէ որպէսզի Քրիստոսի կեանքը մեր մէջ յայտնուի: Ահա հոս է խաչին գայթակղութիւնը ոչ թէ միայն աշխարհասէրին այլ նաեւ քրիստոնեային համար:

3 Խաչը Սատանան դուրս կը ձգէ: Հոս մենք կը հասնինք, թերեւ, գայթակղութեան ամէնէն խորունկ պատճառին, որովհետեւ աշխարհ և մարմին միայն գործիքներ և ղէնքեր են որոնցմով Սատանային մեծ գերիշխանութիւնը իր զոյութիւնը կը պահէ որպէս կառավարող ոյժ: Յիսուս երբ խաչին կը մօտենար, ըսաւ, «հիմա այս աշխարհին իշխանը դուրս պիտի ձգուի»: Պօղոս այդ խաչին մասին խօսելով կ'ըսէ թէ «անով իշխանութիւնները և պետութիւնները մերկացուց և յայտնադէմ խաչառակեց՝ յաղթելով անոնց» (Կոր. Բ. 15):

Կատարելապէս բնական է, ուրեմն, որ Հարին գերիշխանութիւնը ամէն կերպով ումիջոցով աշխատի որպէսզի խաչին ազդեցութիւնը քանդէ: Գաղափարի տօգոյն շուքով (բարձրագոյն քննադատութեան) ան կը ջանայ խաչին պատգամը աղօտացնել: Եկեղեցիին մէջ աշխարհային մե-

թոտներ, կերպեր և աշխարհի հոգին մտցնելով անոր հոգեւոր կենսունակութիւնը կ'սպառէ: Մարմինը, անձը և հին Ադամը գրգռելով, պառակտում, ձգտում և բաժանում երեւան կը հանէ: Եւ կամ մարդկային տարրերը իրենց գեղարուեստական, գեղագիտական, դիւցազնական, մարդկայնական կողմէ ներկայացուելով, նորէն ծնանելու պէտքին դէմ աչքերը կը կուրցնէ: Համբաւ, ժողովրդականութիւն, մեծութիւն, յաջողութեան մասին աշխարհի ունեցած չափանիշը, բոլորն ալ Քրիստոսի հոգիին հակառակ են, բայց ասոնք խաղալիքներ են որոնցմով թշնամին կը գրաւէ շատերուն նոյն իսկ քրիստոնեայ քարոզիչներուն միտքը: Ուրեմն, եթէ խաչին քարոզութիւնը աշխարհի, մարմինին և Սատանային վրայ, ինչպէս և աշխարհէն մարդս տգատագրելու մէջ մեծ յաղթութիւններ տանի, այն ատեն պէտք է ակնկալել թէ Հարին մտացի ուժերը, կարելի բոլոր միջոցները պիտի գործածեն որպէսզի անոր արգելք ըլլան, ու դայթակղութեան բոլոր պատճառները պիտի գրգռեն ու զանոնք խաչին վերագրեն:

Եզրակացնելով պէտք է մոռնանք թէ մենք պիտի վայելենք Աստուծոյ լման կեանքը, յաղթութեան փորձառութիւնը և գործօն համագործակցութիւն Անոր հետ որ ամբողջ վրայ կը նըստի մեր յաւիտենական ծրագիրներն իրագործելու, որքան ատեն որ մենք միացած ենք խաչին հետ այն բովանդակ նշանակութեամբ որ Աստուծոյ խօսքին մէջ բացատրուած է, «Ես Քրիստոսի հետ խաչը ելայ, ուրեմն... ոչ թէ ես, այլ Քրիստոս»:

«Եւ անոնք անոր յաղթեցին Գառնուկին արեւնովը, ու իրենց վկայութեան խօսքովը և իրենց կեանքը չսիրեցին մինչեւ ի մահ» Յայտ. ԺԲ. 11:

Թ. Օ. ՍՓԱՐԲՍ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՀՈԿՏ. 7. — ԻՆՁՊԷՍ ԿՐԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ ՄԷՋ ԿԵՆԱԼ (Յովհ. ԺԵ. 4):

Անոր պատուիրանքները պահելով Ա. Տիմ. Բ. 1

Մէկգմէկ սիրելով Յովհ. ԺԵ. 12, 17:

Կարօտեալներուն օգնելով Ա. Յովհ. Գ. 17:

ՀՈԿՏ. 14.—

Որչա՛փ կարեւոր է Աստուծոյ խօսքը գիտնալ եւ սիրել: Եթէ չենք գիտեր՝ ասով չենք արդարանար, վասնզի Աստուած միջոցներ տուած է մեզի Իր խօսքը գիտնալու համար՝ եւ կ'սպասէ որ զայն սորվինք:

Աստուած կ'օգնէ մեզի զայն հասկնալու Ղուկ. ԻԴ. 45:

Անոր սերտողութեան մէջ մեզի երբեք նիւթ պիտի չպակսի Հոով. ԺԱ. 33:

Սուրբ Գիրքը կեանք և ուրախութիւն կուտայ Սաղ. ԺԶ. 11:

Անիկա մեր քայլերը ուղիղ կ'առաջնորդէ Սաղ. ՃԺԺ. 9:

Ան կ'օրհնէ Սաղ. ՃԺԺ. 1:

Երկրի վրայ մենք օտարներ ենք եւ լաւ է մեր բուն հայրենիքին վրայօք ծանօթանալ Սաղ. ՃԺԺ. 19:

Կ'արժէ Աստուծոյ Գիրքին մէջ խոկումներ ընել Սաղ. ՃԺԺ. 104, ՃԻԷ. 1:

ՀՈԿՏ. 21.— ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԱՂՕԹՔԻ ՄԷՉ

Պահապանները միշտ կ'աղօթեն Էսայ ԻԱ. 5 ԾԲ. 8:

Ի՛նչ բանի համար պարտինք աղօթել Ա. Տիմ. Բ. 1-8:

Ստիպողական պէտք մը եւ ինչպէս լեցուեցաւ Ղուկ. ԺԱ. 5-8:

Լուռ կեցիք եւ թոյլ տուր որ Հոգին աղօթէք ու մէջդ Հոով. Ը. 26:

Պէտք են բարձրաձայն աղօթքներ Դան. 2, 10, 11:

Առանձնութեան մէջ (գաղտուկ) աղօթք Մատ. 2, 5:

Աղօթքներ Ղուկ. ԺԱ. 2, Եփս. Ա. 16-23 Գ. 16-21 Լուռ աղօթք Սաղ. Դ. 4, ԽՁ. 10:

ՀՈԿՏ. 28.—

Յիսուս կ'ուզէ որ Իր զաւակները ամէն բանի մէջ Հափաւոր ըլլան. կարգ մը մարդիկ մէկ ծայրայեղութեան կ'երթան՝ եւ ուրիշներ միւս ծայրայեղութեան: Տեսնենք թէ Սուրբ Գիրքը ի՛նչ կ'ըսէ:

Ողջամիտ վարդապետութիւն Տիմ. Բ. 1:

Հոգիի մաքրութիւնը ողջամիտ վարդապետութիւն է Ա. Տիմ. Ա. 10:

Մէկ ծայրայեղութիւնը մեղք է Բ. Տիմ. Գ. 2-7:

Միւս ծայրայեղութիւնը fanaticiem է: Խօսէ իմաստութեամբ եւ ոչ յիմարաբար

Տիմ. Բ. 8:

Ողջամիտ եւ բարի խօսքերուն օրինակը ամուր բռնէ Բ. Տիմ. Ա. 13:

Յստակ, մաքուր եւ որոշ համոզումներ ունենալէ մի վախճար Բ. Տիմ. Ա. 7:

Սերտէ Բ. Տիմ. Բ. 15:

Վ. Ս.

ԾՊՏԵԱԼ ԿՌԱՊԱՇՏՆԵՐ

Որդեակներ, ինքզինքնիդ կուռքերէն պահեցէք:

Ա. Յովհ. Ե. 21, Հոով. Ա. 18-25

Այսօր, ով Տէր, երբ ամբողջը նիւթապաշտ՝ Սուրբ ճշմարիտ արժէքներու հետ անհաշտ, ԴՐԱՄԷՆ իրեն միակ իտեալն է ըրած, եւ ՈՍԿԻ ՀՈՐԹՆ պաշտամունքի լուրջ աստուածն — Հեռո՛ւ ինծմէ, զի պաշտումիս առարկան Ես՝ ՔԵՉ ըրի, ու միայն ՔԵՉ յաւիտեան:

Այսօր, ով Տէր, երբ ամբողջը Անաղակ՝ Նուիրական ամէն բանի հակառակ, ՀԵՇՏԱՆՔԻ ցոփ գիցուհիին անձնատուր՝ Կ'անասնանայ տարփանքներով անմաքուր՝ — Հեռո՛ւ ինծմէ, զի հաճութիս առարկան Ես՝ ՔԵՉ ըրի, ու միայն ՔԵՉ յաւիտեան:

Այսօր, ով Տէր, երբ ամբողջը Անհաւատ՝ Անզօնելով հոգւոյն պահանջքն հարազատ, ԳԻՏՈՒԹԵԱՆ ցուրտ կուռքին առջև տարօրէն, Կը ծնրազրէ գիտակցութեամբ մ'անօրէն, — Հեռո՛ւ ինծմէ, զի հաւատքիս առարկան Ես՝ ՔԵՉ ըրի, ու միայն ՔԵՉ յաւիտեան:

Այսօր, ով Տէր, երբ ամբողջը Ապստամբ՝ Կը գոցէ աչք եւ ահանջներն ալ դիտմամբ, Զուգեր ճանչնալ ՔԵՉ զի «ԵՍ»ն իր ապերախտ Յափշտակել կը ձգտի Գահըդ անխախտ՝ — Հեռո՛ւ ինծմէ, որովհետեւ յաւիտեան Տիեզերքի Դուռն Ես Տէրը գերիշխան:

Մինչ կուսապաշտ ամբողջը Տէր, երկրի վրայ՝ Արեգնավառ գոյութիւնդ կ'ուրանայ, Բորբ անձկութեամբ կ'սպասեմ Ես այն օրուան՝ Ուր ամէն աչք պիտ' տեսնէ ՔԵՉ անպայման. — Բայց մինչև այդ՝ պաշտամունքիս առարկան Ես՝ ՔԵՉ ըրի, ու միայն ՔԵՉ յաւիտեան:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Սիթթա

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆ ՈՒԷՍԼԻ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՈՅ ՎԻՃԱԿԸ ԺԸ. ԴԱՐՈՒՆ ՍԿԻՋԲԸ

Աստուծոյ մեծ ծառային, ճան Ուէսլիի, այն երկրորդ բարեկարգիչին կենսագրականը ընելէ առաջ՝ յարմար է ակնարկ մը նետել իրեն ժամանակակից Անգլիոյ հոգեւոր վիճակին վրայ:

Անգլիոյ քաղաքականութիւնը իր սկզբնաւորութեան մէջ արտա մը եղաւ, որ բարեկարգութեան սկզբունքները կիսկատար որդեգրեց: Անոր դժբաղդ կնքահալը չէնրի Է. եղաւ, որուն կրօնափոխութիւնը գերիշխանութեան տիրաւորութեան համար էր՝ զայն պապէն իր անձին փոխանցելով: Այս կարծեցեալ բարեկարգիչը (չէնրի Է.) ողջ ողջ աշխարհը կը դատապարտէր Լուտերի վարդապետութեան հետեւողները՝ միեւնոյն ատեն պապին հեղինակութեան հաւատարիմ մնացող կաթոլիկներն ալ իբր դաւաճաններ՝ կախել կուտար:

Քաղաքական նկատումներով սկսած ու սնած այս բարեկարգութիւնը կրօնականէ աւելի քաղաքական հաստատութիւն մը մնաց: Անոր պաշտօնականերէն մեծ մասը երկրին վրայ տիրող վեհապետին քմահաճոյքին համեմատ՝ քանի մը տարին մէկ մը պարապանքով բերմամբ հոովմէական կաթոլիկ, ոչ հոովմէական կաթոլիկ, կամ բողոքական կը դառնային:

Բարեբախտաբար արքայական տան դործը եղող այս պաշտօնական բարեկարգութեան կողքին յառաջ եկաւ նաեւ մաքրակրօնութիւնը՝ ժողովուրդին ծոցէն ծնած: Բայց հոս եւս թագաւորին կողմէ կատարի յարձակում մը ստիպեց մաքրակրօնները հոգեւորէն քաղաքական վճռանգաւոր գետնին վրայ իջնելու. ու հակառակ ամբողջ մէկ դար մատուցած մեծ ծառայութեան, եւ հակառակ իր բարձրագոյն առաքինութեանց՝ անոր հոգեւոր վայելչքը շատ արագ եղաւ:

Ուէսլիի դեռ պատանի ուռնանող ժըն էր երբ Անգլիոյ բարձրագոյն կեանքը ծայրագոյն աստիճանի ապականած վիճակ մը կը ներկայացնէր: Բարձր դասը գինարբունքի եւ շուտաւարութեան մէջ էր: Արքայական ընտանիքը բարքերու ապականութեան օրինակը կուտար եւ ազնուական դասակարգը զայն կ'օրինակէր: Գինեմոլութիւնը

պարծանք կը սեպուէր: Գիօղին (gin) 1864ին հռնարուած էր, կէս դար յետոյ Անգլիան կը խմցընէր տարեկան 7 միլիոն կալօն պիւլիք: Գինեւաճառները իրենց յայտարարութիւններով կը հրաւիրէին մարդիկ գալ եւ 2 փէնիով, (նամականքը մը գինը), գինեմոլալ: 4 փէնիով կարելի էր լոլիկ գտնալ. իսկ պատկելիք յարգէ անկողինն ալ 3րդ: Գինեւանը զանոնք կը քաշկռտէր մասանի մը մէջ ուր անոնք քունով իրենց օղին կը փարատէին: Կարելի չէր Լոնտոնի փողոցներէն անցնիլ առանց հանդիպելու թշուառ գինեմոլերու, սալաշատակին վրայ ինկած, անշարժ, անզգայ: Միայն անցորդներու բարեսրտութիւնը կը պահէր զանոնք ցիւխն մէջ խեղդելէ կամ կառքերուն տակ ճգմուելէ: 1736ին Լոնտոնի մէջ ամէն 6 տունէ մէկ հատը գինեմոլէն էր: Փարլամէնտը ի զուր գիօղին վաճառումը արգիլող օրէնք մը նրատարակեց: Անգլիոյ բոլոր մասերուն մէջ զարգացողի վաճառականութիւն մը սկսաւ: Անոնք որ այս նկատութիւնները կը մատնէին, ժողովուրդին կողմէ գետը կը նետուէին առ ի վրէժխորութիւն: Այն աստիճան սաստկացաւ այս հակառակութիւնը որ փարլամէնտը ստիպուեցաւ արգիլիչ օրէնքը վերցնել: Գիւղացին թէեւ պակաս անբարոյացած, բայց բարբարոսութեան և վայրենիութեան մօտեցող վիճակի մը մէջ կը գտնուէր: Վհուկները, բաղդ նայողները, խաբէրանիք իրենց շահագէտ արհեստները ցորեկի լուսով ի դորձ կը դնէին: Երկիրը անարգութեան ծայրագիւղ աստիճանին նուաստացած էր: Այսպիսի մակարդակի մը վրայ ազգ մը մեռնելու դատապարտուած է, եթէ չյօժարի նոր կեանք մը ծնանիլ:

Ահա այս մինչեւ անբարոյականացում իջած ռամիկ ժողովուրդը եւ մինչեւ շնականութիւն ապականած բարձր դասակարգը պիտի ըլլար մեթոտականներու աշխատութեան և բարեկարգութեան դաշար:

Այս շրջանի Անգլիոյ կղերականներուն մեծամասնութեան մէջ կը պակսէր լրջութիւնը, անոնց մէջ աշխարհամոլութիւնը շատ սովորական դարձած ըլլալով իբր թեթեւ թերութիւն մը կը ներկայանար: Երջանիկ կը նկատուէին այն եկեղեցիները որոնց հովիտները գոնէ գինեմոլներ չէին եւ մաքուր բարոյական ունէին: Վօլթէն անոնց համար կ'ըսէր, «Անկլիքան եկեղեցւոյ քահանաները երբեմն գինեմոլն կ'երթան վասնզի սովորութիւն դարձած է զայս, եւ եթէ գինեմոլան ժողովուրդը անոնցմէ չեն գայթակղիր»: Քահանայ մը, որուն եպիսկոպոսը զայն կը յանդիմանէր

երբեմն գինոմնալուծն համար, ինքզինք արդարացնելու համար կը պատասխանէր թէ «ինք երբեք իր պաշտօնին գլուխ գտնուած միջոցին չէր գինոմնար»: Ուէսլի յետագային կը գրէ անցեալի յիշատակներ վեր հանելով, «Երկու օր ամբողջ անցեալ 16 կամ 18 տարիներու ընթացքին ընդունած նամակներս աչքէ անցուցի: Ներքին կրօնքի որքա՛ն քիչ հետքեր կան: Անոնց մէջ միայն մէկ հատը կ'ըսէր թէ «Աստուած իր սրտին մէջ իր սէրը լեցուցած էր եւ իրեն ամէն միտքէ վեր եղող խաղաղութիւնը տուած: Այս մարդն ալ իր եկեղեցիէն վոնտուեցաւ իբր յիմար եւ իր բարեկամներէն ուրացուած ու բոլորովին լքուած ըլլալով քանի մը ամիսներու տաժանակիր կեանքէ մը յետոյ մեռաւ» (Օրագրութիւն 3 Յունվար 1740): Ամբողջ անգլիական ազգին վիճակը նա սապէս կը նկարագրէ, «Ի՛նչ տխուր իրողութիւն մըն է այս որ անգլիական ազգին հսկայ զանգըռուածը չուգեր թոյլ տալ Աստուծոյ որ Նա գիրենք օրհնէ, վասնզի անոնք այդ օրհնութիւնները ա՛նէժքներու դարձնել կ'ուզեն: Օրինակի համար Աստուած չկրնար անոնց յաջողութիւն տալ իրենց թշնամի եղող ազգերուն վրայ, վասնզի այդ պարագային անոնք իրենց սուրերը իրենց ազգակիցներուն վրայ դարձնելով զանոնք պատառ պատառ պիտի ընէին: Աստուած չկրնար անոնց յաղթանակ վստահիլ վասնզի անոնք իրենց շնորհակալութիւնը երկրին մէջ խաղաղութեամբ ապրողները խողխողելով պիտի անցնէին: Այսօր լիտզ եկայ ժամը 5ին, քարոզեցի եւ 8ին եղբայրներուն հետ տեսնուեցայ, որմէ յետոյ ամբոխը մեզ ցելով եւ քարերով ծածկեց երկար ատեն: Անոնք պատրաստ էին մեր դանկերը պայթեցնել իրենց այն ուրախութեանը համար որ Դոսքանի ու դուքսը թագաւոր եղած էր: (Օրագրութիւն 12 Սեպտ: 1743):

Այս այն դարն էր երբ Անգլիոյ մէջ կ'ապրէր հռչակաւոր անաստուածը Պօլինկպրօէ, Անգլիոյ Վօլթէնը: Իսկ Վօլթէն ինքը զեռ երիտասարդ, Անգլիոյ հողին վրայ աքսորուած՝ այդ երկրին անհաւատութենէն կը ծծէր, կը անանէր ու կ'ամբարէր անաստուածութեան այն թոյնը սրով նա պիտի թունաւորէր իր երկիրը եւ իր դարու մարդկութիւնը:

Բայց ի՛նչ հրաշալի զուգահիշակութիւն, որ երբ երիտասարդ Վօլթէն Անգլիան պտտելով քրիստոնէութեան անկարողութիւնը, անկումը եւ անհեացումը նախազուգահեռ կը յաւակնէր՝ ճիշդ այս միջոցին Օքսֆորտի համալսարանին մէջ քանի մը բարեպաշտ երիտասարդներ (որոնց թը-

ւոյն էր Ուէսլի) կը կազմակերպէին խմբակցութիւն մը որ օրրանը պիտի դառնար եթէ ոչ նոր կրօնքի մը, դոնէ վերանորոգուած հաւատքի մը: (Շար.)

Վ. Ս.

Այս կենսագրութիւնը մեծ փափաքով եւ ուրախութեամբ պատրաստուած է, «Բանբեր»ի ընթերցողներուն ծանօթացնելու Ուէսլին, ցոյց տալու Աստուծոյ շնորհաց մեծութիւնը իր ընտրած անձին վրայ, ու նաեւ ցոյց տալու թէ Տէրը որքա՛ն կրնայ գործածել իրեն յանձնուած հոգի մը:

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՆԱԿ

ԿՈՂՄՆԱՅՈՅՑԸ

Այն օր լիճին վրայ թանձր մառախուղ մը կը տիրէր: Երեք պատանիներ մէկ եզերքէն միւսը պիտի անցնէին: Ճամբորդութիւնը կէս ժամ կը տեւէր:

— Կողմնացոյցը հետերնիդ առէք, ըսաւ անոնց հայրը:

— Ո՛հ, պէտք չկայ հայրիկս, պատասխանեց անդրանիկը որ արդէն ղեկին առջեւ տեղաւորուած էր, «ես ճամբան կատարելապէս գիտեմ»:

Բայցեւայնպէս հօրը պնդումին վրայ, անիկա հնազանդեցաւ: Մեկնեցան. քիչ մը թիավարելէ ետք նաւակը արդէն մառախուղին մէջ տեղն էր:

Երիտասարդ նաւուղիդը իր առած ուղղութեան վրայ վստահ էր: Ան իր գործը լաւ գիտէր եւ կողմնացոյցին վրայ չէր խորհեր: Երբ կը տեսնէր որ գործիքին սլաքը մէյմը հիւսիս, մէյմը արեւմուտք յետոյ հարաւ կը դառնար, ըսաւ, «անպատճառ արեւուած ըլլալու է, բարեբախտաբար ես ճամբան լաւ կը ճանչնամ»:

Տղան կը խորհէր թէ եթէ ինք ներքին զգացումով իր հետեւելիք ճամբան չճանչնար, անշուշտ պիտի մոլորէր այս թանձր մշուշին մէջ: Կէս ժամը անցաւ, եւ յետոյ քանի մը վայրկեան եւ ահա ցամաքը նշմարուեցաւ անորոշապէս. ծառեր սկսան երեւիլ, յետոյ տուն մը, վերջապէս ցամաք ելան... Եւ ահա ի՛նչ տեսնեն, ճիշդ այն տունը ուրկէ ճամբայ ելած էին քառասուն վայրկեան առաջ: Փոխանակ լիճը կտրել անցնելու, անոնք դարձած իրենց տեղը եկած էին նորէն. Ուրեմն կողմնացոյցը իրաւունք ունէր եւ նաւուղիդն էր որ կը սխալէր: Բայց ան որքա՛ն վստահ ինքնիր վրայ, ճամբան ինչքա՛ն լաւ գիտէր:

Հիմա ի՛նչ ընելու էր: Նորէն ճամբայ ելլել:

Բայց այս անգամ, բոլորովին շփոթած, ան միտքը դրաւ կողմնացոյցը աչքին առջեւէն չհեռացնել եւ անոր ցուցուցած ուղղութեան հետեւիլ: Հազիւ մեկնած էին, գործիքը դարձեալ սկսաւ այս ու այն կողմ շարժիլ, սակայն անոր ամենապզտիկ շարժումին, տղան իր նաւակին զնացքը կ'ուղղէր:

Այսպէս փորձառութիւնն իր գործը տեսած էր, եւ հիմա, անիկա շիփ շիտակ ցուցուցած ուղղութեամբ կը քալէր: Որքան մառախուղը թանձրանար, այնքան անոր հաւատքը կ'աւելնար կողմնացոյցին վրայ: Ան այլեւս իր խելքին չէր վստահեր, այլ՝ կողմնացոյցին: Այլ ինքն իրեն չէր ապաւիներ, հապա գործիքին: Եւ ամենաթանձր մշուշին մէջտեղէն նաւակը ժամանակին եզերքը հասաւ:

Սիրելի փոքրիկ բարեկամներս, ասիկա մեր կեանքին մէկ պատկերը չէ՞ արդեօք: Աշխարհիս վրայ անցուցած կեանքն ալ մշուշապատ լճի մը վրայ եղած ճամբորդութեան կը նմանի: Մեր բոլոր կեանքի ընթացքին որքան դժուարութիւններով, հոգերով, տառապանքներով շրջապատուած ենք շատ անգամ: Գուցէ ընթերցողներէս ոմանք ստիպուած են այս նեղութիւնները մինակ կրել, որովհետեւ իրենց հայրը կամ մայրը իրենց մէջ առնուած է երկնաւոր Հօր ձեռքով: Մեր առջեւը յաճախ մութ է, մառախուղը մեր ճամբան գոցած է, մեր երթալիք ուղղութիւնը չենք ճանչնար: Եթէ մենք մեզի վստահինք, մեր իմաստութեան, մեր փորձառութեան, նոյնիսկ մեր խղճի ձայնին ապաւինինք ու այսպէս ապահով առաջ երթանք, կրնանք մեր ճամբան շիտակ կարծել, բայց եթէ տեղ հասնելէ վերջ մեր սխալած ըլլալը հասկնանք, այն ատեն ինչ պիտի ընենք: Մենք չենք կրնար այդ պատանիներուն պէս նորէն ճամբայ ելլել կողմնացոյցը առնելով: Հիմա է ժամանակը: Մեր կողմնացոյցը հիմա պէտք է առնենք մեր ձեռքը: Այդ կողմնացոյցը Աստուծոյ խօսքն է, Սուրբ Գիրքը, անոր դիմէ, կարգա զայն, ան քեզի պիտի ցուցնէ քու երթալու ճամբադ: «Երիտասարդը ինչով մաքրէ իր ճամբան, քու խօսքիդ համեմատ անոր զգուշութիւն ընելով»:

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍԵՊՏ. 26-30 ՀՈԳԵՒՈՐ ՀԱՒԱՔՈՅԹՆԵՐՈՒ ԵՒ ՅՐԱՆՍԱՀԱՅ ՍԻՆՏ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ Է. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ. — Կարելի չէ տեղեկագրել Ֆրանսոսայ եկեղեցիներու է. համագու-

մարը, առանց նաեւ յիշելու նախընթաց հոգևոր հաւաքոյթները:

Սեպ. 26-29 Ֆրանսախօս գործակիցները միացան Աստուծոյ խօսքին շուրջ: Ա. Շ. Օ. ի առնորէնը Վեր. Տր. Պէրրօն կը նախագահէր: Ինքն էր որ ամէն օր առաջնորդեց աղօթաժողովներու, ներկաները խորունկ անձնաքննութեան տանելով: Այս մտերիմ պահերուն բոլորս յայտնապէս օգտուեցանք ու ոմանքս նոր քայլեր առինք առ Աստուած: Նոյն առթիւ հրաւիրուած էր նաեւ Prof. Վեր. Antonin, որ բանախօսեց չորս նիւթերու մասին. Ա. Տէրշը ծառային վտանգները, Բ. Անոր աղբիւրները, Գ. Պարտականութիւններն եւ Դ. Յոյսերը: Մեր երէց եղբայրը իր հմտութեամբ և փորձառութեամբ պատուական խորհուրդներու շարք մ'էր որ ներկայացուց մեզի երիտասարդներու, հետզհետէ մեր առջեւ դնելով Աստուծոյ ծառաներուն առանձնաշնորհներն, վտանգներն ու պարտականութիւնները:

Գործակիցները իրենք ալ մասնակցութիւն մը բերին հաւաքոյթներուն՝ իւրաքանչիւրը ուսումնասիրելով մաս մը «Լուսերի Աւետարանին միջուկը», պարզելով, գնահատելով, քննադատելով անոր վարդապետութիւնները: 1. Բարեկարգչական, մեթոստներու, 2. Աղօթքի, 3. Սուրբ Գիրքի, 4. Եկեղեցիի, 5. Բարոյական սկզբունքներու եւ 6. Քրիստոնէական ազատութեան մասին:

Կիրակի օրը ինքնայատուկ նշանակութիւն մ'ունէր: Խուռն բազմութիւն փութացած էր պաշտաման, որուն կը նախագահէր Վեր. Տր. Պէրրօն: Ներկայ էին նաեւ բոլոր գործակիցները: Այս առթիւ էր որ տեղի պիտի ունենար Պրն. Մարկոս Վէֆիլեանի ձեռնադրութիւնը իբր աւետարանիչ Ֆրանսոսայ Աւետ. եկեղեցիներու:

Օրուան քարոզը տուաւ Տր. Պէրրօն, «Յիսուսի նայինք» նիւթին վրայ: Խորունկ տեսակետներու պարզումով մը ցոյց տուաւ թէ ինչպէս Յիսուսի վրայ դարձուած ակնարկը կը դատապարտէ և կ'արգարացնէ, կը խոտարհեցնէ և կը բարձրացնէ, կը վշտահարէ եւ կը մխիթարէ: Յիսուսը տեսնել, ցոյց տալ ու փառաւորել զԱյն, ահա՛ իր հետեւորդներուն եւ ի մասնաւորի իր ծառաներուն առանձնաշնորհը:

Վեր. Ղազարոսեան բացատրեց Սուրբ Գրական ձեռնադրութեան իմաստն ու կարեւորութիւնը: Ապա ցոյց տուաւ որ Աւետարանիչ մը նախ պէտք է վերէն ծնած ըլլայ: Պէտք է հաւատայ Աւետա-

րանին զօրութեանը, առ ի փրկութիւն անկեալ մարդկութեան եւ պարտի քարոզել Աւետարանը իր բոլոր կատարելութեամբ, որ ոչ թէ միայն մեր արդարութիւնն է, այլ նաեւ սրբութիւն ու փրկութիւն կը պարունակէ:

Խոր լուծեան եւ յուզեալ մթնոլորտի մը մէջ էր որ Տր. Պէրրօն ծնրադիր եղբայրը ձեռնադրեց Տէրոջը օրհնութիւնն ու շնորհքը խնդրելով նորընծային վրայ: Ապա բարեգալուստի մաղթանքներ և համարներ տրուեցան նորընծայ եղբօր բոլոր գործակիցներէն:

Վէքիլեան եղբայր որ նախապէս արդէն վսեմ «Այո»ներով պատասխանած էր, իր կոչման, հոգեւոր կեանքին եւ սպասուորութեան մասին եղած հարցումներուն, բեմ բարձրանալով տուաւ իր վկայութիւնն ու պատգամը:

Կէսօրէն յետոյ ժամը 5ին տեղի ունեցաւ Ֆրանսահայ միսիոնարական ժողով մը Վեր. Գալթրնիպախի նախագահութեամբ:

Այս առթիւ Տր. Պէրրօն բանախօսեց «Յառաջ քալենք Սուրբոյ, Միջագետքի և Ֆրանսայի մէջ քրիստոնէից եւ մահմետականներու միջեւ Աւետարանին փառսը զօրացնելու» նիւթին վրայ: Ի մասնաւորի վեր հանեց այն յարաբերութիւնները որք պոյութիւն ունին հայնապատ գործին եւ իսլամական միսիոնարութեան միջեւ: Իսլամաշխարհներու մէջ քրիստոնեայ ժողովուրդներու գոյութիւնը եւ մասնաւորաբար Աստուծոյ գաւակներուն ներկայութիւնը կարեւոր յենակէտներ են միսիոնարական գործին համար: Ասոնց կարելի է յաւելուլ բնիկ քրիստոնեայ միսիոնարներու օժանդակութիւնը, չմոռնալով նաեւ քրիստոնեայ արիւնը որ թափուեցաւ հաւատքն ու վկայութիւնը պահելու համար:

Ֆրանսահայ եկեղեցիներու անդրադառնալով Տր. Պէրրօն ստորագծեց անոնց կարեւորութիւնը եւ հոն ի յայտ եկած մի քանի լուսատու իրողութիւնները յիշելով, շեշտեց նաեւ որ անոնց գործունէութիւնը յաճախ կ'երկարէր նաեւ օտար շրջանակներու մէջ:

Նոյն առթիւ խօսեցաւ նաեւ Missionair Breet որ ներկայ էր իր կնոջ եւ soeur H. Maurerի հետ: A. C. O. ի երեք նոր միսիոնարներն էին որք Սուրիա կը մեկնէին գործին նոր զարկ եւ յառաջացում տալու համար: Mr. Breet պարզ բայց տպաւորիչ վկայութիւն մը տուաւ իր կոչումին և ապագայ գործունէութեան մասին: «Տէրոջմէ կանչուած, Անկէ զրկուած, Ենով կ'երթանք Իր դաշտը հերկելու»:

••

Միութեան ժողովը տեղի ունեցաւ Մարտէշլի մէջ Հոկտ. 1ին: Կը մասնակցէին՝

Մարտէշլէն — Վեր. Յ. Ն. Ղաղարոսեան, Աւետարանիչ Վ. Սահակեան, Շ. Մակարեան, Գէորգ Զաքարեան եւ Կ. Պատաքեան:

Լա Սիօթայէն — Եղբայրներ Ս. Պազգալեան, Կալվին Պարսումեան:

Արտէշէն — Պատ. Ա. Փափազեան, եղբ. Մ. Սազալեան, Գ. Գինոսեան (որպէս հիւր ներկայացուցիչ):

Վալանսէն — Եղբ. Մ. Վէքիլեան:

Լիոնէն — Պատ. Ժ. Պարսումեան, եղբ. Լեւոն Նիկողոսեան:

Սէնթ էթիէնէն — Աւետարանիչ Իսրայէլ Աբրահամեան:

Բարիզէն — Պատ. Զ. Պուտաքեան, եղբ. Թ. Դայսէրլեան:

Վալանսի հովիւ Բրօֆ. Գ. Խայիկեան եւ Ալֆօրվիլի հովիւ Վեր. Մ. Տէր Սահակեան կը բացակայէին ճամբորդութեան մէջ ըլլալով:

A. C. O. ի կողմէ Վեր. Տր. Պէրրօն եւ իբր հիւր վերոյիշեալ երեք միսիոնարները, եւ Վեր. Prof. Jean Monier.

Ա. 1934ի Միութեան մեծագոյն մասը յատկացուեցաւ հոգեւոր կեանքի խորացման, աղօթքի եւ մտածութեան: Ամէն ոք կ'զգար նոր օրհնութեանց եւ Տէրոջը թարմ այցելութեան կարօտը: Հոգեւոր գործաւորները մեծ կարօտը կ'ըզգային ու միաբանօրէն մօտ երթալ կը փափաքէին բոլոր օրհնութեանց և զօրութեանց Աստուծոյ, որուն շնորհքը միայն բաւարար է: Այս նպատակաւ ունեցանք աղօթաժողովներ եւ բանախօսութիւններ:

Ամէն առաւօտ կը խօսէր Տր. Պէրրօն, միշտ բերելով թափանցող պատգամ մ'ու գօտեպնդող ազդեցութիւն մը: Ունեցանք անձնաքննութեան եւ աղօթքի թանկագին պահեր: Կէսօրէն յետոյ առաջնորդեցին նաեւ Վեր. Ղազարոսեան և Պատ. Պարսումեան, խօսելով անցեալ շրջանէն իրենց տնեցած փորձառութիւններէն եւ ազդու յորդորանքով մը քաջալերեցին գործակիցները, հրաւիրելով զանոնք միշտ Յիսուսի նայելու:

Բանախօսութեանց մասը վերապահուած էր Վեր. Բրօֆ. Jean Monierի: Աչքառու դէմք մ'էր մեր հիւր բանախօսը, յստակ եւ կորովի մտքի տէր, 80 ամեայ ծալրայեղ եւ յուզիչ պարզութեամբ, իր բոլոր երեւութիւն, պարելակերպին և

վարժունքին մէջ: Հոգեւոր խորունկ եւ պատուա-
կան փորձառութեանց տէր՝ զինուած ու լուսա-
ւորուած Տէրոջը գերագանց գիտութեամբը, զոր
ստացած էր շնորհքով ու նաեւ ի գին շատ տա-
ռապանքի: Երկարամեայ հաւատարմութեան եւ
սպասաւորութեան ընթացքին: Իր մէջ պահուած
անզուգական խոնարհութիւնն ու համբերութիւնը
կրկին արժէք ու զօրութիւն կուտային իր մէջ
մի խօսքին: Նաեւ իր բոլոր էութենէն ճառագայ-
թող սէրը, շուտով գրաւեց բոլորին սիրտը ու իր
մէջ ճանչցանք մեր ազգին մէկ բարեկամը, ե-
րէց եւ փորձառու եղբայր մը ու Տէրոջը մէկ հա-
ւատարիմ ու օրհնեալ ծառան:

Յարգելի բրօթէսօրը իր ինքնատիպ ու խո-
րագնինն ոճովը խօսեցաւ Ա. «Հոգեւոր պարգե-
ները», Բ. «Մատայութեան հոգին», Գ. «Աղօթքը»,
Դ. «Կատարեալ փրկութիւն» նիւթերու շուրջ:

Բ. Տեղեկագիրներու ընթերցումներ տեղի ու-
նեցաւ: Իւրաքանչիւր տեղեկագիրէ բղխած խն-
դիրներն ու հարցերը քննուեցան յետագայ կամ
յառաջիկայ նիստերուն մէջ: Ամէն տեղ կ'զգաց-
ուէր նոյն կարօտը, «Միթէ ետ պիտի չզառնա»
ու Քու գործդ կենդանացնես»:

Մասնաւոր որոշումներու առարկայ եղան,

1) Սէնթ Էթիէնի դաշտը: Միութեանս խնդ-
րական երեւցաւ հոն պաշտօնեայ մը պահելու
հարցը, եւ յետ քննութեան որոշուեցաւ ուրիշ
կեդրոնի մը կապել, Ex. Comitéի թողելով Աւե-
տարանիչին համար որոշելու իր գործունէութեան
դաշտը:

2) Նկատի առնուեցաւ նիւթական տազնապը:
Անգործութիւնը կը ճնշէր բոլոր եկեղեցիներու
վրայ, մասնաւոր կերպով դժուար դարձնելով Ex.
Comitéի վճարուելիք մասնաբաժիններու հարցը:
Միութիւնս որոշեց Ex. Comitéի ներկայացնել
այս հարցը խնդրելով որ ամէն տարի եկեղեցի-
ներու վրայ դրուած 100ին 10 յաւելումի որոշումը
առայժմ չգործադրէ, մինչեւ որ աւելի լաւ պա-
րագանքներու հասնին եկեղեցիները:

3) «Բանբեր»ի խմբագրութիւնը ներկայացուց
թերթին սպառնացող և հրատարակութիւնը ան-
դամալուծող նիւթական դժուարութիւնը: Խօս-
ուեցաւ օտար դրամներու անկման, բաժանորդ-
ներու անտարբերութեան եւ վճարելու անկարող-
ութեանց մասին: Նկատի առնուելով ցարդ մեր
պաշտօնաթերթին մատուցած ծառայութիւնը եւ
բաժնեակիւններով խմբագրութեան յղուած
քաջալերանքներն ու շարունակելու հրաւերը, որ-
ոշուեցաւ ամէն գնով շարունակել դայն, 1934ի

համար մնացեալ թիւերուն ծախքը գոյացնելով
Ֆրանսահայ եկեղեցիներու օգնութեամբը: Նոր
թելադրութիւններ եւ որոշումներ տրուեցան
1935ի համար:

4) Ֆրանսահայ եկեղեցիներու համակրանքը
յայտնելու համար որոշուեցաւ հաւաքական նը-
ւէր մը ղրկել Ա. Ը. Օ. ի միսիոնարական նորա-
կառոյց շէնքին:

5) Ներքին հարցեր, գործնական ընթացիկ խն-
դիրներ իրենց լուծումը գտան դոնփակ նիստե-
րու եւ Ex. Comitéի ժողովներուն մէջ:

Քաջալերական էր նաեւ նկատել Սէն Լուի
շէնքը: Մարտէյի գործակից եղբայրներու, հո-
գաբարձութեան եւ շինարար օժանդակ մասնա-
խումբին, ինչպէս նաեւ ժողովուրդին անձնագործ
Ջանքերուն եւ յօժարամտութեան շնորհիւ կա-
րելի եղած էր կառուցանել եղբայր շէնքը իբր
աղօթատեղի եւ երիցատուն: Գրեթէ աւարտած
ըլլալով կարելի եղաւ ժողովներու մէկ մասը հոն
ընել: Ամէն գիշեր տեղի ունեցաւ աւետարանչա-
կան ժողովներ թէ՛ Մարտէյի եւ թէ՛ Սէն Լուի
մէջ: Ներկաներու թիւը յոյժ քաջալերական էր
ինչ որ մոռցնել տուաւ շինութեան պատճառած
շատ մը հոգն ու խոնջէնքը: Մինչ Տէրոջը կը
նայինք դեռ հարկ եղած զուամբին համար, այս
առթիւ կրկին կը յիշեցնենք «Բանբեր»ի ընտանի-
քին մեր պաշտօնաթերթով Սէն Լուի շինութեան
ի նպաստ արձակուած կոչը, մաղթելով որ այն
արձագանք գտնէ շատ սիրտերու մէջ:

Բարից եւս ներկայացուց Իսի լէ Մուլինոյի
շինութեան ծրագիրը, որուն իր համակրութիւնն
ու աջակցութիւնը խոստացաւ Միութեան ժողո-
վը: 1935ի կը վերապահենք «Բանբեր»ի ընտա-
նիքին բերելու մեր այս ծրագիրն ալ:

Փա՛ռք Աստուծոյ, որ 1934ի Միութեան ժողո-
վը օրհնաբեր եւ արդիւնաւէտ եղաւ: Տէրոջը ղո-
րութիւնը ներկայ էր ոմանցս կարօտութիւնները
լեցնելու եւ Անով առատացած ու զօրացած էր
որ բաժանումը տեղի ունեցաւ հրաժեշտի եր-
գով մը:

Քարտուղար Միութեան ժողովի

2. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

Rédaction du « PANPÈRE »

7, Rue Papère - MARSEILLE (France)

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St - Savournin Marseille

ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարանակիչի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

Ս ԱՐՄԷՅԷ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց մանկանց 11 Rue de l'Eclipse

Շաբաթափչի ժողովներ Սէն Լուի, Կարտանի, Սէն Ժիւլիենի, Սէնթ Անժուանի, Սէնթ Մարկրի-թի, Սէն Ժերմի Պուլվար Օտօի մէջ):

Սէն Լուի.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնս.

16 ին քարոզածողով:

Սէնթ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՌԹԱ.— Քարոզիչ' Պրն. Ս. Պագգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն Փիլի.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ' Բրոֆ. Գ. Գ. Խալիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս
եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

.....

ՀԻՐՆ.— Հովիւ' Պատ. Ժ. Պարուսեան,
18, Rue du Dr. Rebatal:

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatal.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷՔԻԷՆ.—Քարոզիչ Պրն. Ի. Արրահամեան
2. Place de la Pareille.

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

.....

ԲԱՐԻՋ.— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով

135 Bd. de Sebastopol Paris 2°

Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին

37 Rue Tournafort Paris 5°

Metro Mouhe Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
ֆրիստունէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար-

դութեաց ֆրիստունէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Դ. կիրակիները Սր. Գրոց

մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր, ժամը 20. 30ին աղօթածողով

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին սլաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

ԲԱՅՈՒԱԾ Է

1935 ՏԱՐՈՒԱՆ «ԲԱՆԲԵՐ» ԱՄՍԱԹԵՐԹԻՆ

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ֆրանսայի համար

Հայերէն լեզուով	20 ֆր.
Թուրքերէն լեզուով	10 ֆր.
Երկուքը միասին	25 ֆր.

Սուրիա

Հայերէն լեզուով	15 ֆր.
Թուրքերէն լեզուով	7 ֆր.
Երկուքը միասին	20 ֆր.

Ասերիկա

Հայերէն լեզուով	1 տոլ. 25 ս.
Թուրքերէն լեզուով	60 ս.
Երկուքը միասին	1 տոլ. 75 ս.

Պալքանեան եւ ուրիշ երկիրներ

Հայերէն լեզուով	20 ֆր.
Թուրքերէն լեզուով	10 ֆր.
Երկուքը միասին	25 ֆր.

ԲԱՆԲԵՐԻ ՕՐԱՑՈՅՑԸ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐԱՑՈՅՑԸ 1935Ի ՀԱՄԱՐ ԱՐ-
ԴԷՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Է: ՓԱՓԱՔՈՂՆԵՐ ԹՈՂ ԱՊՍ-
ՊՐԵՆ ԸՆԴՓՈՅԹ: ԳԻՆԸ ՍՈՎՈՐԱԿԱՆԻՆ ՆՄԱՆ
ՖՐԱՆՍԱ ԵՒ ՍՈՒՐԻԱ 6. 50 ՖՐ. ՓՕՍԹՈՎ ՄԻԱՍԻՆ:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՖՐ. ԿԱՄ 50 ՍԷՆԹ:

ՇԱՏԵՐՈՒ ՓԱՓԱՔԻՆ ՅԱԳՈՒՐԴ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԱՅՍ ԱՆԳԱՄ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱ-
ՐԵՒՈՐԱԳՈՅՆ ՏՕՆԵՐՆ ԱԼ ՄԱՍՆԱՒՈՐ ԷՋԻ ՄԸ
ՎՐԱՅ ԶԵՏԵՂԱԾ ԵՆՔ, ԱՅՆՊԷՍ ՈՐ ՕՐԱՑՈՅՑԸ
ՄԱՏՁԵԼԻ Է ԱՄԵՆՈՒՆ:

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԿԱՄ ԾՆՆԴԵԱՆ ԱՌԹԻԻ ԳԵՂԵ-
ՑԻԿ ՆՈՒԷՐ ԿՐՆԱՅ ԸԼԼԱԼ: ԱՍՈՎ ԲԱՐԵԿԱՄԴ, ԱԶ-
ԳԱԿԱՆԴ ԱՄԲՈՂԶ ՄԷԿ ՏԱՐԻ ԿՐՆԱՍ ՈՒՐԱԽԱՅՆԵԼ:
ԽՄԲԱԳՐՈՒԹԻԻՆ

Rédaction du "PANPÈRE"
7, Rue Papère - MARSEILLE (France)

Imp. Y. ARMEN & Cie
39, Rue St.-Savournin - MARSEILLE